№ 11 (164) XV ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adressé:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻԱՆ" ՕՐԳԱՆ

ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

—

Տաս տարի է գլորւել...

Նշովքի ու սոսկումի մի տասնամեակ՝ որ սիրտ կտրատող յուշեր է յարուցանում ամեն հայի մէջ, պատմելով նրան անօրինակ ճակատագրի փորձութիւնները,— Դանտէան դժոխքը իր անպատմելի արհաւիրքներով: Տաճկահայաստանը ծայրէ ծայր արիւնոտւեց և ժողովուրդը՝ ջարդւած, հաշմանդամ, լալով ու բառաչելով ձգւեց նոյն անսիրտ ճակատագրին:

Տաս տարի է գլորւել և որքա՜ն նման են երկու դրութիւնները — այժմ ու տաս տարի սրանից առաջ... Միմիայն կովկասեան աղէտները չեն, տարաբախտաբար, որ ստեղծումեն այդ նմանութիւնը: Այսօր Բոսֆորի վրայ նոյն չարագուշակ մթնոլորտն է կախւած, ինչ որ 1895 թւի աշնան սկզբներին: Լուրերը ծանր են, խորհրդաւոր, յուզիչ: Արդեօք պիտի վերսկսի՞ մասսային ոճիրների շարքը. մահափորձից ազատւած ոճրագործը պիտի ուզենա՞ արդեօք կատարել Արեան տասնամեայ յօբելեանը՝ նոր, թարմ արեան հեղեղներով...

Ահա խնդիրը, որ առժամապէս թերևս փոքր ինչ մոռացութեան է տրւած Ռուսահայաստանի տագնապի պատճառով:

Եթէ սուլթանը մինչև օրս չը կամեցաւ արձագանք տալ իր կովկասաբնակ հաւատակիցների սխրագործութիւններին և ցարի մարդասպան քաղաքականութեան՝ դա պիտի վերագրել ոչ, իհարկէ, նրա հայանպաստ տրամադրութիւններին կամ քաղաքական հասունութեանը, այլ պարզապէս, եւրոպական ազդարարութիւններին:

Սակայն վտանգը դրանով չէ վերանում, կասկածները չեն փարատւում դրանով և Թիւրքահայի դողացնող կոշմարը յարատևում է ամենաահաւոր սպասելիքների հեռանկարով: Ի՞նչ են վկայում Կ. Պոլսից տեղացող լուրերը, եթէ ոչ այն՝ որ հայ ժողովրդի ֆէսաւոր թշնամիները մշտնջենապէս գործի վրայ են, որ մարդասպանը, շրջապատւած իր բոլոր քաղաքագէտ ծառաներով, պետական կարևոր գործերը թողած՝ նոր դաւադրութիւն է յղանում, կազմակերպում:

Ահա թէ ինչ է գրում „Frankfurter Zeitung"-ի հրազեկ թղթակիցը Թիւրքական մայրաքաղաքից.

Հայերի դէմ հալածանքը մեծ ծաւալ է ընդունում: Հայը ամեն վայրկեան կարող է ձերբակալւել և ոչ մի բողոք այլ ևս չէ օգնում, անգամ երբ փաստերով հաստատւում է նրա անմեղութիւնը: Թէ ո՞ւր կ'առաջնորդէ ներկայ վիճակը՝ ոչ ոք չէ կարող ասել. միայն որ աւուր աւելի և աւելի պարզւում է, որ հալածանքների ու ձերբակալութիւնների այս յախուռն սիստէմը, որ ամենածանր կերպով վնասում է Թիւրքիայի ամբողջ ս ոցիալական-տնտեսական կեանքին՝ դիւրութեամբ կարող է մղել դէպի մի այնպիսի կատաստրոֆ, որի հետ համեմատւած՝ 1896-ի օգոստոսեան օրերը փոքրիկ կ'երևան:

Միևնոյն մեթոդը... Պետերբուրգում ու Կ. Պոլսում: Արևելեան բռնաւորները շարունակում են արեւելեան տաքտիկով պայքարել յեղափոխութեան դէմ. փոխանակ ուղղակի ըմբոստացող տարրը ոչնչացնել (՞) ձգտելու՝ նրանք բոլոր թափով, բոլոր բարբարոս միջոցներով արշաւում են անմեղ ու անմասն աղգաբնակութեան դէմ:

Մեթոդը նոյնն է, միջոցները նոյնն են, նպատակը նոյնն է, — անդամալուծել մի փոքրիկ ժողովուրդ, որը իր խաղաղ կուլտուրայով փուշ է դարձել բոլոր տիրանների աչքում: Սակայն հարւածները՝ լինեն մտրակի թէ եաթաղանի՝ չեն երբէք հասնում իրենց նպատակին. փոքրիկ, արիւնոտւած, հաշմանդամ զոհը դարձեալ կենդանի է, նա դարձեալ ծառանում է իր պատմական առաքելութեան ճանապարհի վրայ. իր գոյամարտի ահեղ կրկէսում, նա դարձեալ փուշ է, և միշտ աւելի ծակող, աւելի ցաւեցնող...

Տխուր յուշերն ու խոհերը չեն միայն, որ պաշարում են մեզ վերջին արիւնաներկ տասնամեակի վրայ անդրադառնալիս: Միմիայն ճակատագրի դաժանութիւնը չէ, միմիայն հայի մռայլ, յուսահատ կացութիւնը չէ, որ արտացոլում է այդ ցաւոտ շրջանի տեսութիւնից: Հապա այդ ճակատագրի զոհի կորովը՞... Հապա այն չնաշխարհիկ տոկունութիւնը՞, որով այդ զոհը կարողացաւ գլուխ դուրս բերել հսկայական փորձութիւններից, անդուլ պայքարելով ճակատագրի բռնակալութեան դէմ...

Այդ տոկունութիւնը, կեանքի ու մահուան տասնամեայ կուռում ցոյց տւած այդ հզօր կենսունակութիւնը նոյնքան անօրինակ է, նոյնքան ապշեցուցիչ, որքան և կրած փորձութիւնները:

Թո՛ղ դա լինի մեզ քաջալեր՝ ներկայ ծանր բոպէներում: Թո՛ղ հայ ժողովրդի այդ անսովոր դիմադրական ուժը ներշնչէ մեզ անսասան հաւատ դէպի նրա ապագան: Եւ չ'անիծենք պայքարի սկզբունքը, բոպէի վաղանցուկ, թէկուզ և ծանր, դժբախտութիւններից մղւած՝ փոքրոգութեամբ քարեր չը նետե՛նք դէպի այն զւարթ ու անձնուրաց շարքերը, դէպի մարտնչողների այն կուռ բանակը, որը ահաւոր տագնապների մէջ ժողովրդական ինքնապաշտպանութեան պատւար է հանդիսանում, փրկութեան խարիսխ:

Տաս տարուան գոռ անցքերի տրամաբանութիւնը և արդի հսկայական փոթորիկը Ռուսահայաստանում, հրահանգում են մեզ փարել ինքնօգնութեան գաղափարին, սեղմել մեր մարտական շարքերը և, հեռու մնալով դաւաճան համակերպութիւնից, պատնէշ կանգնել մեր բազմապիսի թշնամիների հանդէպ, տոգորւած

այն անխախտ գիտակցութեամբ՝ որ քաղաքակրթութեան դատը երբէք չպիտի կորսուի, որ Հայի աստղը երբէք չպիտի մարէ երկնակամարի վրայ...

Նաւը գնում է դէպի իր վերջնական հանգստի կայանը, երբեմն երերալով, հոգեւարքի հանելով, բայց միշտ դարձեալ փրկարար հաւասարակշռութիւնը վերականգնելով ու անյողդողդ առաջ լողալով։ Բոլոր խաւար ուժերը, մի սրբազան դաշն կռած, մոլեգնութեամբ գահավիժում են նրա դէմ, ձգտելով անդունդ գլորել... ապարդի՞ւն։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Է

ԿՈՎԿԱՍ

Եւ ի՞նչ ոսկեղէն դարագլուխ է այս, և շղթաներու ի՞նչ զայրագին փշրտում.
Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի, և հաւատքի ի՞նչ յաղթանակ.
Ի՞նչ երկաթակուռ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն.
Ի՞նչ արիւնի հեղեղում քեզ անարժան թշնամիիդ վայրագ շարքերէն
Եւ դիակի ու բացուած լանջքերու ի՞նչ արդարացի մեռելակոյտ;
Մեր բոլորին վրիժածարաւ աչուքներուն առջև...

Կովկա՜ս, յաղթականօրէն դուն եղար, որ յայտնութիւններուն գերագոյնը ըրիր.
Քու բազուկներուդ հուրին մէջն էր գետնահարող զօրութիւնը Ցեղին,
Քու մտածումիդ մէջն էր, որ ծնաւ կարմիր արևը յուսահատեալ Ցաղթութեան,
Քու արիւնիդ մէջն էր, որ վառեցաւ ճշմարիտ արիւնը երազուած Ընդվզումին.

Եւ այսպէս իրիկուն մը քու գինավառ ծեռքերը ազատութեան աստղերու նիզակուեցան
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներէն կորզելու
Քիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր և քիչ մը երազ
Քու խռովեալ սերունդիդ և ի քեզ ակնդէտ ու տառապող եղբայրներուդ համար։

Օ՜, փառք քեզի, և փառք շանթամարտ հպարտութեանը քու լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն յաւիտենական տարրերէն են կառուցուած՝
Անպարտելի հասակները քու սահեր ու հրաչուի որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական
Անոնց գինն որեալի կուրծքերուն մէջ իր հսկայական հեքը դրաւ.
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջև Ցոյսին ճամբաներուն պէս կանանչացան...
Եւ քու հողմերդ Անոնց շունչին մէջէն փրկութեան ժամը շեփորեցին,
Քու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է
Եւ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգուածը մեր հինաւուրց Ազգին,
Մեր նսեմացեալ ճակատները այդտեղ էր որ վերջապէս իրենց մութէն պայծառացան,
Այդտեղ էր, որ սկսաւ պայքարի սուրերուն ամենէն արդարը շողալ,
Այդտեղ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր կռուփովը պահանջեց,
Այդտեղ էր, որ Ան չի լացաւ, չի ծնրադրեց և իր գլուխը հողին չի հասաւ,
Այդտեղ էր, որ կատաղութեամբ զարկաւ և հպարտօրէն զարնուեցաւ,
Այդտեղ էր, որ արդարութիւն որոտացողի իր ճակատը փառակերտ
Արևմուտքի աշխարհներուն դիմաց չահերու պէս ցոլացուց,
Այդտեղ էր, որ իր անէծքի և պժգանքի թուքը թագակրին նետեց,
Եւ այդտեղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր մը ամօթահար պարտուեցաւ,
Եւ քեզի համար, այդտե՛ղ է, որ այսուհետև կոթողները Փառքին
Մարմար առ մարմար սերունդիդ ծեռքերովը պիտի բարձրանան...

Զա՛րկ, Կովկա՜ս, աւերակեալ ու արցունքոտ Հայաստանին աչքերը քեզի կը նային.
Ան գիտէ, որ քու թշնամիիդ ատելութիւնը իր թշնամիներէն է որ կը բղխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ եկաւ ճամբաներդ սգաւորել,
Երբ իր արիւնը եկաւ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրտած բազուկը քու կտրիճի ծեռքերուդ ի խնդիր քեզի դողդոջեցաւ,
Թշնամին նոյնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկէն զարհուրած՝
Կուզէ զայն չախչախել, կարենալ տօնելու համար վերջնական մահացումը մեր Ցեղին...
Ուրեմն, զա՛րկ, Կովկա՜ս, թէև գիտեմ որ քու ասպետական ծեռքերուդ հարուածին անարժան է ան,
Զա՛րկ, թէև գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը պէտք չէ՛ր արատաւորել,
Այդ անբանների խուժանին թունաւոր ու պժգալի արիւնէն...
Զա՛րկ, թէև գիտեմ որ հերոսները հերոսներու միա՛յն կրնան ընդհարուիլ,
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը չախչախելու և Զարիքը ըմբերանելու համար,
Զա՛րկ, որովհետև ամե՛ն Ցոյս զՔեզ կը յուսայ և ամեն Ապագայ զՔեզ կը պաղատի,
Զա՛րկ, վասնզի ամեն Ազատութիւն ու ամեն Արև քու հարուածիդ կայծերէն պիտի ծնանին.
Զա՛րկ, Քու անթառամ սիրոյդ և ատելութեանդ չափին խորութեանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահաւասիկ հորիզոնները կը կապոյտնան, ահաւասիկ Առաւօտները կը ճեղքուին,
Զա՛րկ, ազատաբեր հարուածիդ շռինդը Մասիսէն իջաւրոս և մինչև Հայրենիքին խորերը կը թնդայ...։

ՍԻԱՄԱՆԹՕ

ԼՈՒՍԱՒՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ԿՈՉ

(Այս կոչի ֆրանսերէն բնագիրը ուղարկուած է ականաւոր եւրոպացիներին եւ եւրոպական մամուլի ազդեցիկ օրգաններին)

—

Ք ա ղ ա ք ա ց ի ն ե ր,

Մի հսկայական ողբերգութիւն է խաղացւում այսօր Կովկասեան աշխարհում, որ վերարտադրում է մեր աչքերի առաջ Բարբարոսների արշաւանքի արհաւիրքները։

Քաղաքակիրթ աշխարհը չը պէտք է մոլորւի այդ անցքերի ճշմարիտ իմաստի նկատմամբ,—անցքեր, որ ռուս տգէտ ու չարակամ հրապարակախօսները ներկայացնում են սխալ լուսաբանութեամբ, մերթ իբրեւ արտայայտութիւն ազգայնական անտագոնիզմի, մէկ ցեղի հարստահարման միւսի միջոցով, մերթ իբրեւ բացարձակ ապստամբութիւն ցարիզմի դէմ։

Դա մի մոլեգին, ահարկու կռիւ է, որ մուսուլման տարրը, ռուս կառավարութեան դրդմամբ, հրատարակել է Անդրկովկասի հայ ազգաբնակութեան դէմ. դա հայկական գաւառների լիակատար աւերումն է, որ կատարւում է վայրենի հորդաների ձեռքով, ռուսաց իշխանութիւնների անտարբեր աչքերի առաջ, որոնք գործում են միայն հայերի դիմադրութիւնը խորտակելու համար. դա բոլոր խաւար ուժերի միացումն է ընդդէմ մի փոքրիկ ժողովրդի, որ իր իրաւունքների գիտակցութիւնն ունի և որ ներկայացնում է առաջադիմական մի տարր այդ մռայլ, անբախտ շրջանում. դա, մի խօսքով, հ ա կ ա յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ի ւ ն ն է, կազմակերպուած շատ հմուտ կերպով, մի անհաւատալի անգթութեամբ, այն նոյն մեթօդով, որը Եըլդըզի Մարդասպանի հռչակն ստեղծեց։

Թիւրքիայում, ինչպէս և Ռուսաստանում—նոյն անողո՛րմ ճակատագիրը... Ամեն տեղ հայ ժողովրդի պատմական ճիգերը բախւում են դժոխային մեքենայութիւնների, յարուցուած այդ նախնական ուժերի, այդ անդրպատմական տարրերի կողմից—քիւրդ, թիւրք, բաշիբոզուկ—որոնք լինելով անմատչելի ամեն տեսակ առաջադիմութեան, գործիք են դառնում բացառապէս ջարդի ու աւերումի։

Աբդիւլ Համիդ, սարսափած յեղափոխութեան ու ինքնավար Հայաստանի ուրւականից, առաջ քաշեց քրդերին ու տաճիկներին և հարիւր հազարաւոր զոհեր պատճառեց, „ըմբոստներին հանդարտացնելու“ համար։ Եւ Համիդը իր արարքների հիմք էր բերում աւանդական „պետական պատճառը“,—բռնաւորների գերագոյն փաստը։

Նիկոլա Բ. շարժման մէջ է դնում Կովկասի արիւնարբու թիւրքերին, Ռուսահայաստանը աւերելու ու արիւնելու համար. նա եւս առաջ է բերում նոյն պատճառաբանութիւնը, —„la Raison d'Etat!“

Պետերբուրգում մի տարօրինակ գաղափար են կազմել Յեղափոխութեան՝ ընթացքի մասին կայսրութեան մէջ։ Հզօր կամարիլլան կարծում է, որ բուն ռուս ժողովուրդը հեռու է ապստամբական ձգտումներից, և որ յեղափոխական ամեն տեսակ շարժումները գալիս են Ծայրերից,—լեհերից, հրէաներից, վրացիներից, հայերից։ Կառավարչական այդ ենթադրութիւնը դառնում է ճշմարտանման այն հանգամանքից՝ որ յիրաւի վերջին երկու տարւայ ընթացքում Ծայրերը ցոյց տուին իրենց աւելի մոլեգնօրէն յեղափոխական, քան կենտրոնները, որոնց շարժումը մասամբ անդամալուծուած է ռուս կուսակցութիւնների ներքին պայքարներով։

Երկու տարի առաջ Անդրկովկասի հայ ժողովուրդը ընդհանուր ապստամբութեամբ պատասխանեց այն անամօթ ուկազին, որով յափշտակւում էին հայ եկեղեցական կալուածները, և Պլէվէի կառավարութիւնը զարմացած մնաց փոքրիկ ժողովրդի յանդգնութիւնից, որը ամենակարող մի ռեժիմի առաջ (պատերազմից առաջ էր) համարձակւում էր, զէնքը ձեռին, պահանջել իր հաւաքական իրաւունքները։

Այդ վայրկեանից ցարիզմը յղացաւ գործունէութեան մի նոր ծրագիր ռուսական Հայաստանում։ Ռուսացման բոլոր միջոցները վիժելով՝ նա դիմեց աւելի գ ո ր ծ ն ա կ ա ն մ ի ջ ո ց ն ե ր ի։ Թուլացնել ազգերի յարաբերութիւնները, այնքան այլատարր իրենց բարքերով ու կուլտուրայով, կազմակերպել „հայկական Կիշինեւների“ մի շարան և ջլատել ընդմիշտ երկրի ազատագրող ուժերը. ահա մի միտք, այնքան նուիրական Գօլիցինների ու Պօբեդօնօսցեւների համար, որ միշտ աւելի ու աւելի հող վաստակեց կառավարչական բարձր շրջաններում, նոյնիսկ կայսերական պալատում։

Այդ ծրագիրը յաջորդաբար իրագործւեց։ Նախ առաջացրին մի սոսկալի արիւնառութիւն Բագւի մէջ... Իշխանութիւնները պատրւակ բերին, ինչպէս այսօր, „զօրքերի անզօրութիւնը“... Ոչ մէկը մարդասպաններից չը ստացաւ ամենաթոյլ պատիժ անգամ, ոչ մի կանխող միջոցի չը ձեռնարկւեց ապագայի համար, մերժւեցին արդիւնաբերողների առաջարկները՝ կազմակերպելու սեփական միլիցիա—և միւս կողմից carte blanche տուին համիդական քարոզիչներին ու շարունակեցին զինաթափ անել հայ ժողովրդին։ Ռուսական ոստիկանութիւնը հասաւ մինչև այն աստիճան, որ սովորեցրեց Երեւանում թիւրքերին զինավարժութիւն։

Հազիւ Բագուն մտել էր իր սովորական կեանքի շրջանը, և ահա մի ուրագան պայթեց Երեւանեան նահանգի և մասնաւորապէս Նախիջեւան գաւառի վրայ... Թիւրք խուժանը, այստեղ եւս պաշտպանուած, խրախուսուած ոստիկանութիւնից, որ բաղկացած է մեծ մասամբ թիւրքերից, ազատ ասպարէզ տուեց իր աւերիչ բնազդումներին.. Հետեւանքը—հազարաւոր զոհեր, մասամբ սպանուած, մասամբ կենդանի այրուած և 43 գիւղ աւերուած։ Թիւրքերը այնուամենայնիւ չ'աջողեցին մահացու հարուած տալ հայ ազգաբնակութեանը, հանդիպելով հայ կամաւորների դիմադրութեան։ Նրանք յետ քաշւեցին, աւելի լաւ պատրաստւելու համար։ Նրանք ահագին քանակութեամբ զէնք ներմուծեցին Պարսկաստանից ու Թիւրքիայից. Նրանք հազարաւոր համախոհներ ժողովեցին երկու սահմանակից և կրօնակից երկրների մարդակերներից։

Եւ ահա այսօր նրանք արշաւում են դէպի հայաբնակ գաւառները, ոտից ցգլուխ զինուած, ամեն բան այրելով ու աւերելով... Ի՞նչ դիմադրութեան կարող են հանդիպել նրանք... կենտրոնական կառավարութիւնը, որ սպասում էր բարբարոսութեան այդ յարձակողական վերադարձին, բնաւ անհրաժեշտ չէր սեպել զօրքեր դնելու այդ գաւառներում, ուր նա զինաթափ է արել հայ ազգաբնակութիւնը։ Եւ այժմ, երբ ամբողջ գիւղեր աւերուած են, Զանգեզուրում ու բնակիչները կոտորուած՝ նա սկսում է հին երգը երգել՝ „զօրքը անզօր է“... Զարմանալի չի լինի, եթէ համիդական մեծ բանակը, ունենալով իր spiritus rectorum-ը (ոգեկան վարիչը) Եըլդըզի պալատում, զգալով ինքզինքը ամենակարող, վաղը գրոհ տայ ընդհանուր քրիստոնէութեան և նոյն իրեն կառավարութեան դէմ...

Խուժանների դրօշակների վրայ գրուած է „ղազավաթ“ (սրբազան պատերազմ) և նրանց նշանաբանն է՝ ջնջել

քրիստոնեաներին:" Դաղստանում իսկ դրութիւնը անհանգստացնող է. մահմեդական ահագին զանգուածներ, թերեւս, գտնւում են ընդհանուր ապստամբութեան նախատօնակում: Ցարիզմը կը քաղէ իր հակահայկական անմիտ ու զզուելի քաղաքականութեան պտուղները. այդ քաղաքականութիւնը ուղղուած էր հայոց կարծեցեալ „ս ե պ ա ր ա տ ի զ մ ի (անջատական ձգտումների) դէմ, նա պիտի զարնէր ի վերջոյ, թերեւս, մահմեդական սեպարատիզմի մի ահաւոր շարժման:

Իսկ առ այժմ սոսկալիօրէն տառապողը հայ ժողովուրդն է, բոլոր անիրաւութիւնների այդ յաւիտենական զոհը. Նա է, որ ստանում է բարբարոսների նոր արշաւանքի մահացու հարուածները: Մի ժողովուրդ, էապէս խաղաղասէր, հպարտ իր անցեալով, պրոգրէսի ու քաղաքակրթութեան իր սիրով, անզէն մատնուած է իր վատագոյն թշնամիներին: Այն վայրերում, ուր նա զինուած է, քաջութեամբ յետ է մղում ամենաահեղ յարձակումները. բայց նրա ջանքերը սիստեմատիկաբար ջլատւում են բաշիբօզուկ կառավարութեան ձեռքով:

Ք ա ղ ա ք ա ց ի ն ե ր,

Ստորաքարշ մամուլը, ցարիզմի զազիր սպասաւորների գլխաւորութեամբ, ձգտում է վարկաբեկ անել Կովկասեան հայերին լուսաւոր աշխարհի աչքում, պատասխանատու բռնելով նրանց այսօրուայ աղէտների համար: Ով որ վերջին տարիներում հետեւել է մեր երկրի անցքերին, գիտէ, որ հայ ազգաբնակութիւնը, նոյնիսկ ամենայեղափոխական նրա տարրերը, երբէք չեն կամեցել ցեղային կռիւներ յարուցանել, դառնացնել դարաւոր լաւ յարաբերութիւնները իրենց մուսուլման հարեւանների հետ, որ հայը, ընդհակառակը, քարոզել է միշտ համերաշխութեան գաղափարը բոլոր տարրերի մէջ, յանուն երկրի ընդհանուր բարօրութեան:

Հայերի կարծեցեալ տնտեսական առաջնութիւնը (hégémonie) Կովկասում, թիւրքերի հարստահարումը հայերի ձեռքով՝ մի սուտ է, որ խնամքով տարածում է նոյն հայատեաց մամուլը: Ռուսական Հայաստանի մշակուած ու անմշակ հողերի մեծագոյն մասը պատկանում է պետութեան ու թիւրք բէկութեան, որը իր ծոյլ ու գիշատիչ հակումներով, իշխում է ֆէօդալական իշխանութեամբ, կեղեքելով հայ և յաճախ թիւրք գիւղացիներին, հողի իսկական մշակողներին: Նոյնիսկ Բագւում, նաւթային արդիւնաբերութեան այդ ահագին շրջանում, թիւրք խոշոր կապիտալիստների թիւը պակաս չէ հայ կապիտալիստների թւից, այնինչ՝ հայ ազգաբնակութեան մեծ զանգուածը, քաղաքներում և գիւղերում, ոչ պակաս զրկուած ու թշուառ է, քան թիւրք պրոլետարեատը:

Եթէ կարելի լինէր խօսել ազգային ա ր տ օ ն ո ւ թ ի ւ ն ն ե ր ի մասին կնուտի թագաւորութեան մէջ, ապա անշուշտ, թիւրքն է—տիրապաշտ ու պահպանողական — որ վայելում է որոշ արտօնութիւններ հայի դիմաց, որը հալածուած է թէ իբրև հպատակ, թէ իբրև անդամ մէկ պատմական համախմբման, միշտ կենդանի և միշտ ձգտող դէպի ազատութիւն:

Դարձեալ թիւրքն է միշտ նախընտրելի՝ պետական պաշտօնեաների ընտրութեան միջոցին: Այսպէս, հայկական գաւառների մեծ մասում ոստիկանական պաշտօնեաները, սկսած ոստիկանապետից մինչև յետին եասաուլը՝ թիւրքեր են կամ „ուղղափառներ:" Երբէք չէ տեսնւել մի հայ՝ իր երկրի որև է նահանգի գլուխ կանգնած:

Ոչ, քաղաքացիներ, ցեղերի, տնտեսական արտօնութիւնների ու շահերի հակառակութիւնը չէ, որ ծնունդ է տւել Կովկասեան արիւնոտ ողբերգութեան, որի մանրամասները սարսուռ բերին ամբողջ աշխարհին: Թիւրք խուժանը, վայրագ ու անգիտակից, կոյր գործիքի դեր է միայն կատարում: Այդ մեծ աղէտի իսկական պատճառը divide e impera-ի նենգ քաղաքականութիւնն է,—ցարիզմի քաղաքականութիւնը:

«ԴՐՕՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերո՛ս, դէ՛հ հանգի՛ստ քեզ քուն.
Դու լուսաղէմին մենար լխայոյս,
Դու ճամբորդ էիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռո՜ւ էր, հեռո՜ւ՝ արշալոյս:

Տես ի՜նչ հերոսներ՝ երգովդ ստեղծուած՝
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
Հերոսների մէ՛ջ դու մենար, հերո՜ս,
Մարմնով դառար հող, հոգով՝ արշալոյս:

Երնէ՜կ քո յոյսին, նա՜, որ չէր դողում,
Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս.
Այն օծե՜ր էին և գորտեր սողում,
Քանզի գալու էր անշո՜ւշտ արշալոյս...

Սակայն երբ ազգդ թմբկով ու փողով
Դէպ՝ ազատութիւն երթայ սրտայոյզ,
Դու կգաս այնտեղ յարութեան շողով,
Բայց ննջի՜ր... դեռ կա՜յ մինչև սաշարոյս...

ՀՈՒՐԷՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ԲԱԳՈՒԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

I

Բագու, սեպտեմբերի 1.

Տեղիս քաղաքական, զինւորական, ոստիկանական իշխանութիւնները այս անգամ աւելի դաւաճանօրէն վերաբերւեցին, քան փետրւարի 6—9 օրերում, բայց այս անգամ այնքան ճարպիկ, որ դեռ ևս ընդհանուր հասարակական զայրոյթ չառաջացրեց, ընդհակառակը՝ ամեն կողմից բացականչեցին թէ „գեն. գուբերնատորը խիստ միջոցներ ձեռք առաւ":

Ճիշտ է, որ օգոստոսի 20-ին, կոտորածը սկսելուց մօտ 20 րոպէ յետոյ զօրքը փողոց է հանւել, մօտ մի ժամ յետոյ փողոցի խմբական կոտորածը դադարեցւել է, բայց դրա փոխարէն, էապէս սպանութիւնները դադարեցնել տալու համար ո՛չ մի լուրջ միջոցձեռք չէ առնւած. և և հէնց այս պատճառով Բալախանին ու Բիբի-Էյբաթը ոչնչացրւած են:

Գրել էի, որ կոտորածը սկսելու համար ձիաքարշի ծառաների գործադուլը և զօրքի ու գործադուլ անողների մէջ տեղի ունեցած ընդհարումները պատրւակ դառան: Բայց եթէ այդ գործադուլն էլ չը լինէր, եթէ այդ պատճառով ընդհարումներն էլ տեղի չունենային, թուրքերը մի պատրւակ պիտի ստեղծէին, որովհետև

Շուշւայ մէջ հայ-թիւրքական ընդհարումների և այնտեղ թիւրքերի աւելի թւով մեծ կոտորւելու մասին հա-հեռագրի պատճառով այստեղի թիւրքերի նախապատրաստւած տրամադրութիւնը ակնյայտնի այնքան լարւեց, որ րոպէ առ րոպէ սպասւում էր, թէ այստեղ էլ կը սկսեն, ու ըստ այնմ նախազգուշութիւններ ձեռք առնւեցան:

Դեռ Շուշւայ ընդհարումներն էլ տեղի չունեցած, Լևոն Տէր Սարգսեանի, Թոփչեանի և այլ անհատական սպանութիւններից յետոյ՝ երբ մասնակի գաղտնի տեղեկութիւնների հետ զուգադիպող դէպքեր բաւական ուժեղ կերպով կասկածել էին տալիս, որ Բագւում կազմակերպւած է թիւրք պանիսլամական մի գաղտնի կոմիտէ, որ այդ կոմիտէի գործն է կատարւած անհատական սպանութիւնները, որ այդ կոմիտէի վարիչներն են Աղաէվ, Թոփչիբաշէվ, Թաղիէվ, Սաֆար Ալիէվ, Բախիշ բէկ և այլն,— Հ. Յ. Դ. ահաբեկիչ մարմնի կողմից մի նամակ ուղղեց հայ-թիւրքական միջազգային խաղաղարար կոմիտէին՝ ազդարարելով, որ եթէ քաղաքակրթական-յառաջադիմական նպատակով կազմւած լինէր թրքական գաղտնի կոմիտէն, Հ. Յ. Դ.-ը ծափահարելով առաջինը կը լինէր ձեռք մեկնելու, բայց քանի որ փաստերը հակառակն են ցոյց տալիս, և քանի որ նա կազմւել է հայ ժողովրդին ահաբեկելու, կոտորելու, այդ պարագայում՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին նւիրւած Դաշնակցութիւնը չէ կարող ձեռնպահ մնալ ու անխնայ կը լինի դէպի այդ գաղտնի թիւրք կազմակերպութեան ղեկավարներն ու ներշնչողները, հետևաբար պահանջում է խաղաղարար մարմնից միջոցներ ձեռք առնել, ազդել, արգելել եղբայրասպան ընդհարումները, ոճիրները:

Այդ նամակի բնագիրը ուղարկւել է քաղաքագլխին՝ որ միևնոյն ժամանակ նախագահն է խաղաղարար մարմնին, որին անդամակցում է և Աղաէվ: Նամակի պատճէնները ուղարկւած են եղել հայ և ռուս անդամներին (խաղաղարար մարմնի), որպէս զի նախագահը ստիպւած լինի հրապարակ հանել նամակը:

Երբ խաղաղարար մարմնի նիստում կարդացւում է նամակը, Աղաէվը յայտարարում է, թէ իրենք նկատում են այդ նամակի բովանդակութիւնը իբր հրաւէր պատերազմի, և իրենք պատրաստ լինելով՝ ընդունում են այդ պատերազմի հրաւէրը: Աղաէվի այդ խօսքին ի միջի այլոց պատասխանում է մի ռուս անդամ, Կրէժանովսկին, թէ ընդհակառակը այդ նամակի բովանդակութիւնը այնքան խաղաղասիրական է, այնքան համեստ ու տրամաբանական է՝ որ նրա նմանը իր կեանքում հազւադէպ է եղել կարդալ և այլն:

Այս միջադէպը ակներև կերպով աւելի քան մի ամիս առաջ ցոյց էր տալիս թիւրքերի՝ Աղաէվների պատրաստութիւնը երկրորդ կոտորած սկսելու համար. և հաւանականաբար անհատական սպանութիւնները կատարւում էին այն նպատակով, որ հայերին էլ ստիպել տային նոյն սիստեմով պատասխանելու և դրանով առիթ ունենային կոտորածը վերսկսելու:

Բայց թիւրքերը չունեցան այդ առիթը:

Օգոստոսի մէջ թիւրքերի գաղտնի ժողովները, որ առաջ գիշերային էին լինում ու յաճախ քաղաքում, սկսեցին օր ու ցերեկով լինել: Օգոստոսի 12-ից բերդանկաներով զինւած՝ հանդիսաւոր կերպով գումարւում էին Բալախանում՝ Մուխտարովի կառավարիչ Բախշի բէկ Ջիվանշիրի մօտ: Այդ ամենը անշուշտ տեսնում էր տեղական կառավարութիւնը, բայց ո՛չ մի միջոց ձեռք չէր առնում, և թիւրքերը այնքան լրբացել էին, որ ո՛չ մի հայ օրիորդ կամ կին ապահով չէր, թէ փողոց դուրս գալիս թրքական լպիրշ անարգանքների չի ենթարկւի:

Օգոստոսի 19-ին արդէն գագաթնակէտին էին հասել թրքական գրգռիչ արտայայտութիւնները: Թիւրք բուրժուազիայի մի պատգամաւորութիւն գնում է յայտնելու գեն. գուբերնատորին, թէ Շուշւայ դէպքերի առիթով թիւրք երիտասարդութիւնը այնքան գրգռւած է, որ իրենք այլ ևս հնարաւորութիւն չունեին զսպելու, հետևաբար պատասխանատու չեն լինի: Դրանց որպէս թէ գեն. գուբերնատորը պատասխանել է, թէ կառավարութիւնը երբէք մտադրութիւն չէ ունեցել իրենց պատասխանատու բռնելու և թէ անկարգութիւններ պատահելու դէպքում կառավարութիւնը կարող է անմիջապէս ոճրագործներին զսպել և պատժել:

Նոյն օրը և հայ-բուրժուազական մի պատգամաւորութիւն ներկայացաւ գեն. գուբերնատորին, խնդրելով որ անմիջական միջոցներ ձեռք առնւեն սպասւող անկարգութիւնների առաջն առնելու համար, որին պատասխանւել է, թէ կառավարութիւնը ձեռք առել է արդէն պէտք եղած միջոցները:

Ամսի 20-ին, կէս օրից առաջ, Կրասնովոդսկի փողոցում, մի թիւրք մսագործ է սպանւում պատահաբար. Թիւրքերը, վերցնելով դրա դիակը, թափոր են կազմում թրքական թաղերում ու փողոցներում, դիակը ման ածելով ու այդպիսով ամբոխին գրգռելով: Կէս օրից յետոյ տեղի է ունենում ձիաքարշի գործադուլ անողների և զօրքի միջադէպը և ժամը 5-ին սկսւում է կոտորածը:

Այս փաստերը թւում եմ և այդպիսի բազմաթիւ փաստեր կարելի է թւել, ոչ թէ նրա համար որ մենք մեզ համոզենք, թէ հայերը նախայարձակ չեն եղել. դա միանգամայն ծ ծաղելի կը լինէր. այլ չարամտութեամբ կամ միամտութեամբ մեղքը հայերի վրայ գցել աշխատողներին ցոյց տալու համար, թէ դէպքերը ի՞նչպէս են զուգադիպւել:

Նախ քան կոտորած սկսւիլը՝ Բախշի բէկը, Բակինսկի Տրուբոպրովոդի կառավարիչ Եակովլէվին յայտնում է, որ ղարաբաղցի թիւրքերը շատ են գրգռւած և թէև ինքը աշխատել է զսպել, բայց յոյս չունի, թէ այդ դերը իրեն յաջողւի այսուհետև էլ: Նոյն Բախշի բէկը մի ուրիշ ժողովում յայտնել է, թէ „բագւաբնակ ղարաբաղցի թիւրքերը իրեն դիմում և հարցնում են՝ „այստե՞ղ վրեժխնդիր լինենք հայերից, թէ՞ Ղարաբաղ գնանք“ և ինքը չի իմանում, ի՞նչ պատասխանի:

Այսպիսի բազմաթիւ փաստեր դիտմամբ մոռացւում են կառավարական շրջաններում, և առանց որոշելու կամ որոշել ցանկանալու, թէ ո՞ր կողմն է նախայարձակ և մեղաւոր՝ „ապստամբ“ ածականով անխտիր մկրտւում են:

Ամսի 20-ին երբ պայթեց կոտորածը, ի՞նչ արեց կառավարութիւնը.—միակ բանը որ արեց, քաղաքում դադարեցրեց մի ժամւայ մէջ ընդհանուր կոտորածը, բայց դրա փոխարէն զոհեց Բալախանին ու Բիբի-Էյբաթը: Տասնեակ հազարաւոր բանւորներ հրի ու կողոպուտի մատնեց, զինաթափ արեց:

Ընդհանուր կոտորածը դադարել է, բայց մասնակի սպանութիւնները շարունակւում են: Այս շաբաթւայ ընթացքում սպանւել են 40 հայեր՝ որոնց փոխարէն հազիւ մի 15 թիւրք:

Ոստիկանական նենգամիտ գեկուցումներով՝ խուզարկում են հայկական տներ ու թնդանօթի բռնելով հանդերձ, 2—3000 րուբլի էլ տուգանք են վերցնում տան տէրերից, նոյնիսկ այնպիսի տներից՝ որոնցից ո՛չ մի գնդակ չէ արձակւել. միայն նրանց մեղքը այն է եղել, որ հայ են ու հարուստ և հասարակ ոստիկանների պահանջած կաշառները չեն վճարել: Նոյնանման դէպք է պատահել մինչև իսկ օտարներ հետ, օրինակ Ջայցևի հետ:

Այդ ամենի փոխարէն միայն Ալիէվի տունն են ռմբակոծել, այն էլ գլխաւորաբար այն պատճառով, որ այնտեղ գտնւել են բազմաթիւ զինւած թիւրքեր և զօրքի վրայ են կրակել:

Մետրոպոլի հիւրանոցից մի քիչ վերև, Նիկոլայէվսկի փողոցի վրայ գտնւող ընդարձակ քարվանսարում լիքն են զինւած թիւրքեր, որտեղից յաճախ գնդակահարութիւններ են լինում. մի քանի անգամ յատուկ պատգամաւորութիւն է գնացել գեն. գուբերնատորի, մօտ որ այդ տեղի համար միջոցներ ձեռք առնի, բայց, հակառակ տրւած խոստումների, մինչև այսօր ոչինչ չէ արւած:

Կոտորածի երրորդ օրը նահանգապետը հրաւիրում է երկու կողմին հաշտութիւն կայացնել. հայերը ուրա-

խուլթեամբ ընդունում են, միայն թէ հիմնուած բազմաթիւ փորձերի վրայ, մահմեդականների խաբէութիւններին մի անգամ էլ զոհ չը լինելու համար, առաջարկում են հաշտութեան անկեղծութիւնն ու տեւականութիւնը երաշխաւորող պայմաններ, որոնց թիւրքերը մերժում են, բայց պ. նահանգապետը զեկուցանում է, թէ հայերն են մերժում հաշտութիւնը: Այս զեկուցման վրայ հիմնուած՝ փոխարքան հանքային ջրերից հեռագրով դիմում է կաթողիկոսին, որպէսզի իրա հեղինակութիւնը գործ դնի հայերի վրայ հաշտուելու համար: Կաթողիկոսը՝ ի հարկէ ստուգելով, պատասխանում և յայտնում է ստութիւնը:

Բալախանիի հիւանդանոցի վրայ թնդանօթ են արձակում և այդ անօրինակ ոճիրը քողարկելու համար՝ զեկուցանում են, թէ այնտեղ պատսպարուած հայերը զօրքի վրայ կրակեցին:

Քաղաքում 22 հայերի տուն է այրուել. ոստիկանութեան կողմից զեկուցում չը կայ, թէ թիւրքերը այրել են հայերի տները, բայց ամեն օր տեղական թերթերի էջերը լիքն են ոստիկանութեան պաշտօնական ստայօդ տեղեկութիւններով հայերի դէմ:

Կոտորածի հէնց առաջի օրից՝ բազարի տակից սկսած մինչև կայարան մաքրուած են թիւրքերից, բայց նրանք դիմեցին հնարագիտութեան. հայի և ռուսի հագուստներով ծպտուած՝ մտան քաղաքի հայկական մասը և սպանութիւններ կատարեցին. դրանց մասին ո՛չ մի պաշտօնական զեկուցում. ամեն ինչ հայերին են վերագրում: Վաղամեռ Շարքի Ռուսի թիւրքերէն թերթի խմբագիր Զախստատինսկին սպանեց այսօր: Այդ անձնաւորութիւնը առած էր Աղաէվ, Թոփչիբաշէվ և ընկ.-ից, որովհետև իրենց համախոհ չէր... Սպանեցին քաղաքի հայկական մասում, ի հարկէ էլի ծպտուած թիւրքերի ձեռքով և խէնչալով, բայց երբէք այդ գազանների քօղը չի պարզի ոստիկանութիւնը:

Կարելի է ասել, որ թիւրք և կաշառակուլ տարրից կազմուած ոստիկանութիւնը՝ գլուխ ունենալով Լիլէէվին, աւելի համարձակ ոճիրնե՛ր է գործում այժմ, քան փետրուարի 6—9 օրերում:

Նոյն ոստիկանութիւնը՝ որ կոտորածի օրերում ուղղակի իր տրամադրութեան տակ ունէր զօրքը, Բիբի-Էյբաթում հայերին զինաթափ անելուց յետոյ, անպաշտպան թողեց ու հեռացաւ, որից յետոյ ամբողջ այդ շրջանը հրի ու թալանի մատնեց:

Բալախանիի շրջանում աւելի վատն արեց: Իմ իսկ գիտութեամբ և մասնակցութեամբ բազմաթիւ դիմումներ եղան օգնութեան հասնելու համար, բայց ոչ մի տեղ ո՛չ մի օգնութեան չը հասաւ, մինչև իսկ զօրք գտնուած տեղերից զօրքը յետ քաշեց:

Զաբրատի շրջանից հեռախօսով և գրաւոր պաղատագին խնդրանքներ լինելուց յետոյ, մարդիկ տեսնելով որ օգնութեան չէ հասնում, մահը աչքերնին առած, մի պատգամաւորութիւն են ուղարկում ոստիկանապետի մօտ: Այնտեղ ուր թիւրքերը ազատ մուտք ունին, նախ արգելում են մուտքը և ոստիկանապետի կարգադրութեամբ զինաթափ անելով պատգամաւորներին՝ քաղաք ճամբում:

Փիթոյէվի մօտերքը գտնուած պահակազօրքը վերցնում է տեղական պրիստաւը ու գնում է գիւղ. յետոյ երբ մարդիկ, յուսահատուած, թողնում ու դուրս գալու են ստիպւում, ետևից գալիս են աւերում, կողոպտում: Մանթաշէվի գործարանի համար զանազան տեղերից ստիպողական հեռագրական միջնորդութիւններ են հասնում գեն. գուբերնատորին. տեսնելով որ այլևս անհնար է զօրք չուղարկել, նոյն պրիստաւը անմիջապէս գալիս է Զաբրատցիների մօտ, նրանց մեծ մասը ուղարկում է Մաշտաղի գիւղ: Յետոյ զօրքը հասնում է. հասած ժամանակն էլ մնացող թիւրքերը կրակում են զօրքի վրայ, և այդ պատճառով մի երեսուն հոգի նրանցից զօրքի կրակի տակ ընկնում են, բայց այդ մասին էլ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն:

Ոչ քաղաքում, ո՛չ թիւրք գիւղերում թիւրքերին զինաթափ չեն արել, բայց հարիւրաւոր հայերի զինաթափ արեցին, որոնք այժմ զրկուած ինքնապաշտպանութեան միջոցներից, թալանուած, այրուած, անօթի ու մերկ, փողոցներում թափառում են, ամեն մի վարկեան թիւրքի ու ոստիկանական նենգաւոր գնդակներին կամ խէնջալին զոհ գնալու ենթակայ:

Թիւրք ազգաբնակութիւնն ու շրջակայ թիւրք գիւղացիները քանդեցին ելեքտրական լուսավառութիւնը, ջրուղին և ամբողջ նաւթարդիւնաբերական շրջանը. փաստը հսկայական է... Շարժուել է ամբողջ Կովկասի մահմեդականութիւնը. Վլադիկավկազի շրջանում երկաթուղային գծի և գնացքների վրայ են յարձակւել, ռուս գիւղեր են կոտորել, Շուշում ամբողջ չորս օր զօրքը ստիպուած է եղել հայերի հետ միացած թիւրքերի դէմ պատերազմել, զօրքի փամփուշտը սպառել է, հայն է փամփուշտ հասցրել, տեղական իշխանութիւնը յուսահատ դրութեան հասնելով՝ ստիպուել է յայտնել հայերին որ „ինչ կերպով որ նրանք կարող են պաշտպանել ու գլուխներն ազատել թող անեն“, ու այդ պարագայում... միայն արձակուած ռումբը վերջ է դնում ահռելի ընդհարումին ու համաճարակ հրդեհին: Շնորհիւ մահմեդական ու կաշառակուլ պաշտօնէութեան՝ անպատիժ ոճիրները այնքան են քաջալերուել, որ արդէն թիւրքերից լսւում են սպառնալիքներ պետութեան դէմ համիսլամական ծրագրների մտքով,—և դարձեալ հայն է զինաթափ անւում:

Պատմութեան ապագայ ընթերցողները չը պիտի հաւատան ռուս բիւրոկրատիայի այսքան կուրութեանը, կարճատեսութեանը, պետական դաւաճանութեանը:

Մինչև պատերազմը վերջանալը, թւում էր թէ կառավարութիւնը վախենալով մի գուցէ Կովկասում հայկական շարժում սկսւի, գրգռեց թիւրքերին հայերի դէմ, որպէս զի հայերը ժամանակ չունենային քաղաքացիական կեանքի պահանջներով զբաղուել, և իսկապէս այդ տեսակէտով կառավարութիւնը հասաւ իր նպատակին, բայց խաղաց մի կրակի հետ, որ սկսում է իրեն ևս այրել...

Հակահայկական այս արիւնոտ քաղաքականութեանը այժմ միանում են և օտար կապիտալիստների հայահալած դաւերը—դուրս քշել արդիւնաբերական շրջանից հայ աշխատաւոր դասակարգը և հայ կապիտալը...

Նաւթարդիւնաբերութիւնը կանգնած է, որովհետև հանքերի մեծ մասը այրուած, փչացած, աւերակ են դարձած. անվնաս մնացածները պատկանում են 3—4 օտար ֆիրմաների: Նաւթարդիւնաբերողները, ժողովի գումարուելով մեծամասնութեամբ որոշեցին գործի չը վերսկսել, մինչև կառավարութիւնը կեանքի և ինչքի ապահովութեան դրական միջոցներ ձեռք չառնի: Այդ ժողովում օտար ֆիրմաների ներկայացուցիչները մեծամասնութեան որոշման չը յարեցին ու բոլոր կողմնակի տեղեկութիւններից երևում է, որ նրանք աշխատելու են օգտուել առիթից՝ հայ կապիտալը դուրս քշելու համար:

Գեն. Ֆադէէվ քանիցս յայտնել էր մնացած Բալախանիի վերաբերմամբ, թէ „մենք անմիջական խիստ միջոցների չենք կարողանում դիմել, որովհետև բաւականաչափ ուժ չունենք, որ Թիֆլիսից ճանապարհուած ուժը հասնելիս՝ թիւրք գիւղերը (Սաբունջի, Բալախանի, Ռամանի Զաբրատ) քար ու քանդ պիտի անենք“:

Հասաւ զօրքը, բայց ոչ միայն այդ խոստումները չը կատարուեցին, այլ սկսեց մի հալածանք կենդանի մնացող և դեռ քաղաք չը փախչող հայերի դէմ: Այդ զօրքի հրամանատար Սվէտլօվը քանիցս յայտնեց, թէ Բալախանիում համշարի (պարսկաստանցի) և հայ բանւոր չը պէտք է մնան: Ուրեմն մնալու են տեղացի թիւրքեր և ռուսներ:

II

Սեպտեմբեր 4.

Գեներալ Սվէտլովը, Բալախանիում է ապրում և միշտ շրջապատուած է թիւրքերով. պատահած հայերին յայտնել է, որ ո՛չ վարչական և ոչ մշակ դասակարգի հայ անձնաւորութիւններ չը գան Բալախանի, որովհետև նրանց

կեանքը ապահոված չէ, որ կան ռուսներ և տեղական թիւրքեր, որոնց միջոցով կարելի է աշխատանքը վերսկսել։

Գենեռալը դպան թիւրքերի ձեռքը սեղմելով, շնորհակալութիւն է, յայտնել նրանց հաւատարիմ հպատակային զգացումների և գործողութիւնների համար, որովհետև նրանք ասել էին, որ հայերի հետ նրանք ընդհարուել են միակ այն պատճառով, որ հայերը իրանց առաջարկել են պետութեան դէմ ապստամբել։

Սվեսլովը շատ մեղմ կերպով պահանջել է թիւրքերից զինաթափ լինել, բայց նրանք մերժել են և տան օր ժամանակամիջոց են խնդրել, որին գեներալը համաձայնուել է։

Այս բոլոր իրողութիւնների հանդէպ՝ արդիւնաբերողների ժողովը պատգամաւորութիւն ընտրեց, մասնակցութեամբ Նօբելի ներկայացուցչի, որ գնայ անմիջապէս փաստերը յայտնի գեն. գուբերնատորին։ Երեկոյեան ժամը 6-ի մօտերը պատգամաւորութիւնը լուր տուեց թէ գեն. գուբերնատորը անմիջապէս հեռագիր է տուել (տան օր է որ Բալախանի հետ հեռախօսական յարաբերութիւնը ընդհատուած է) գեներալ Սվեսլովին, որ հայերին և պարսկահպատակ թիւրքերին չը հալածի և տեղական թիւրքերին երես չը տայ։ Սրանից անմիջապէս յետոյ լուր հասաւ և ստուգուեց, որ գեն. Սվեսլովը հայ գինուորներին զինաթափ անելով, Թեմուրխան Շուրայ է ուղարկում։

Ուսաի, անհերքելի փաստ է, որ այժմ աւելի համարձակ կերպով քան փետրուարին, տեղական իշխանութիւնները, կատարելապէս անձնատուր եղած թիւրքերին, հայերի դէմ արժատական հալածանքի են դիմում։ Տեսնելով որ զէնքի ուժով հայերի դէմ ճակատ առ ճակատ կանգնելը դժուար է և այդ պարագայում դուցէ թիւրքերը աւելի են կոտրուում, տեսնելով որ կոտրածի սպառնալիքներով, մարդկային զոհերով հայերը տեղի չեն տալիս, ներկայում և ապագայում անտեսապէս քայքայելու միջոցների դիմեցին, այն է՝ հրդեհը ու արդիւնաբերական շրջանից արտաքսումը։

Նախորդ օրը, երկու պրիստաւներ միմեանց հետ կռուում են աւարի բաժանման առիթով և իրար դէմ դանդատուում են։ Այդ գանգատի վրայ նրանք խուզարկուում են և երևան է գալիս, որ դրանք կազմել էին մի ահագին աւազակային շայկա և հարուստ աւար են վերցրել։ Դրանցից մինն է գինուորական ոստայ Մամեդովը՝ որ ամիսս 20-ին և 21-ին փողոցներից փախչող և ապաստան ուող հայերի վրայ կրակել։

Ամեն անգամ, երբ հակահայկական մի գործ է կատարուում, կամ իրքական ոճիրների դէմ աչառութեամբ վերաբերմունքի մասին դիմում է լինում գեն. գուբերնատորին, դրինակ հայերին զինաթափ անելը, թիւրք հրոսակների անպատիժ թողիլը,—գեն. գուբերնատորը կամ պատասխանում է թէ թիւրքերի դէմ գործելու համար բաւականաչափ ուժ չունի, և կամ յայտնում է, թէ իրա հրամանները և կարգադրութիւնները ճշտութեամբ չեն կատարուում, թէ համապատասխան ոստիկանական և զինուորական ծառայողներ չունի, թէ եղածներին փոխարինողներ չը կան և այլն։

Բայց—թէ քաղաքում և թէ Բալախանիում, գեն. գուբերնատորի, գեն. Սվեսլովի, պ. լիյմէյստերի ընակարաններն ու պաշտօնատները դանուելով թիւրքական շրջանում, գիշեր ու ցորեկ շրջապատուած թիւրքերով՝ միայն նրանց են լրում, նրանցից են ստանում... նրանց են ազատ մուտք տալիս։

Շարունակուում են երկու կողմից անհատական սպանութիւնները, այժմ խենջալով և ոչ գնդակով։ Հայի սպանութեան ժամանակ ոստիկանութեան կողմից ո՛չ մի շարժում, ո՛չ մի պաշտպանութիւն, իսկ թիւրքի վիրաւորման և սպանութեան պարագայում,—զորք, ոստիկանութիւն տակն ու վրայ են լինում, տներ, մագազիններ են խուզարկուում, ջարդ ու փշուր են անուում, փախստական ահաբեկչին գրաւելու, ձերբակալելու համար։

Դրութիւնը շատ ծանր է. դուցէ երբէ՛ք հայութիւնը այսպիսի ճգնաժամի օրեր չէ ունեցած։ Ամենքից մինչև Բիւզանդիոն, Բ ոՃորից մինչև Ասրպատական, Սև ծովից մինչև Կասպեան ափերը, Եփրատից, Երասխից մինչև Կուր գետ՝ հայութիւնը հոգեվարքի ճգնաժամ է անցկացնում։

Ճիշտ է, այս անգամ հայը պատմական ոչխարային ժողովուրդը չէ, կոտրուում է, բայց և կոտրում է, բայց և այնպէս այսքան բազմաթիվ թշնամիների դէմ—մին մենակ է... Ոչ մի տեղից ո՛չ մի համակրութիւն, ո՛չ մի օգնութիւն...

Տեսնենք դէպքերը մեզ ո՞ւր կը տանին...

III

Վրթանես վ-Դաշիով, շատ լաւ իմանալով, որ յարձակողները թիւրքերն են և տուժողը՝ հայերը,—այնուամենայնիւ միշտ արդարացնում է թիւրքերին, իբրև հաւատարիմ հպատակների։ Կիսլայ-օդսկում, հայ պատգամաւորութիւնը շատ է աշխատել—փաստերով, ամբողջ պատմութեան փորձերը առաջ բերելով—համոզել նենգամիտ փոխարքային, բայց ապարդիւն։ "Դա կարծում եմ, այնուամենայնիւ, որ մեղաւորը հայ յեղափոխական կոմիտէներն են, որոնք թիւրքերից աւելի լաւ են զինուած",—ասել է նա։

ՇՈՒՇԻԱՅ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Շուշի, 7/20 սեպտեմբեր.

Շտապով հաղորդեմ ձեզ մի քանի կցկտուր տեղեկութիւններ։

Պատրաստուած ընդհարումի առիթը տուին թիւրքերը՝ սպանելով ռուս Լուսնիակինին և երկու հայ բանուորներին, որ ականատես էին այդ սպանութեանը։

Այս դէպքից երկու ժամ անց՝ թիւրք ոստիկանապետը մտաւ հայոց թաղը և խուզարկեցի տան մօտ կրակ բացեց հայերի վրայ։ Նրա հետ միասին սկսեցին կրակել մի քանի թիւրքեր ևս։ Սկսուեց խուճապը, որի միջոցին հայերը ճամբին պատահած թիւրքերին էին սպանում, իսկ թիւրքերը ձեռքերն ընկած հային։ Շուտով երկու կողմերը ամրացան իրենց դիրքերում և սկսուեց կանոնաւոր հրացանաձգութիւն։ Թիւրքերը խմբովին ջարդուում էին մերոնց միահամուռ զալպերից։ Եթէ չը լիներ հրդեհը, մեր աջողութիւնը մեծ էր։ Այստեղ հարկ է մեզ ցաւօք սրտի արձանագրել, որ այդ հսկայական հրդեհի միջոցին հայ սրիկաների խմբեր ևս մասնակցում էին հայ տների կողոպուտին, մոռանալով ինքնապաշտպանութեան հրատապ խնդիրը։

Հինգ օր տևեց հրացանաձգութիւնը, որի միջոցին մեր կորուստը եղաւ 40 մարդ սպանուած, 68 հոգի վիրաւոր։ Կորցրինք և մեր թանկագին Մարգարիտ Համբարեանին, մեր անխոնջ պրոպագանդիստ-զինուորին։ Թիւրքերի կողմից սպանուածներին հաշուում են 5—600։ Նրանց շարքերը հետզհետէ ստուարացան շրջակայ թիւրք գիւղերից արշաւող խուժանով, որը եկել էր օգնութեան։

Սպանուած թիւրքերի գրպաններից հանուած են թղթեր, որոնցով հաստատուում է, որ թիւրքական շարժումը, բացի այլ խառնուրդներից, նաև համիսլամական բնոյթ ունի և պիտի ասել, կառավարութիւնը աւելի եռանդով գործեց, կուի միջոցին հայերին օգնական զօրք տալով։ Գէթ ռուսները այնքան էլ բարեմիտ աչքով չեն նայում այստեղի թիւրքերին։ Հրդեհուած է քաղաքի լաւագոյն հայ թաղերից մինը։ Թիւրքերի մասում այրուած է մօտ 60 տուն, ողորմելի հիւղեր, ի հարկէ։ Հայերի վնասը հաշուում են մի քանի միլիոն։

Վերջին օրը տագնապալի էր։ Հայերի ձեռքն ընկաւ մի հինցած թնդանօթ, որից օգտուեցին։ Երեք անգամ արձակեցին, երկաթի, հարթուկի կտորտանք լցնելով

մէջը, որի հետեւանքը եղաւ այն, որ Թիւրքերը բարձրացրին սպիտակ դրօշակը։ Պէտք էր տեսնել թէ ինչպէս այդ զառամեալ գործիքը ամեն արձակելուց յետոյ սայլից գլորւում էր գետին, որ և ի հարկէ նորից դնում էին տեղը և կրկնում արտիլերիական փորձերը։ Ռումբերը գործում էին իրենց աւերածը թշնամու շարքերում։

Հրդեհի ժամանակ շատերը ապաստանել էին տեղական զօրանոցը։ Բժիշկներ և օգնականներ կան, որ ապրում են վրաններում։ Հայ հիւանդների ու վիրաւորների կեանքը ապահով է, իսկ Թիւրքերն իրենց թաղում թափուած են գետնի վրայ, ջարդուած ոսկորներով, կարօտ անդամահատութեան և անխնամ կոտորւում են։

Սոփն ու չքաւորութիւնը, աղէտի արբանեակները, արդէն բարձրացրել են գլուխները մեր կիսաւեր քաղաքում։ Շատերը, որ երէկ հարուստների շարքումն էին, այժմ կարօտ են օրապահիկի։

Շրջականներից հասած լուրերը խառն են, յուզիչ։ Մի նշանաւոր ճակատամարտ է տեղի ունեցել Ասկերանի հովտում. մեր խմբերը Վարանդայից և ուրիշ վայրերից գրաւել են բերդի աւերակները և մի քանի օր շարունակ ջարդել ու յետ են մղել հազարաւոր Թիւրքերի գրոհը, որոնք մեծ ճանապարհով արշաւելիս են եղել դէպի Շուշի, Թիւրքերին օգնութեան։ Աղդամ և մի քանի այլ Թիւրք գիւղերում էկզէկուցիա է նշանակուած, որովհետև այնտեղ դեռ շարունակւում են կողոպուտն ու սպանութիւնները Թիւրքերի կողմից։ Մօտ ժամանակներս Թիւրքերը յարձակւել են պոստի վրայ, բայց սուրհանդակը Թիւրքերի վրայ կրակ բաց անելով և առաջներն էլ մի հակ նետելով՝ կարողացել է դուրս պրծնել ու ազատել պոստը։

ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿՌԻՒՆԵՐ ՋԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

(Ականատեսի Օկարագիրը)

—

Պիտի աշխատեմ, ինչպէս հրահանգել էիք, ամենաճիշտ տեղեկութիւններ տալ, պիտի աշխատեմ պատմել միայն այն, ինչ որ տեսել ու լսել եմ, առանց ինձնից որ և է բան աւելացնելու կամ գեղեցկացնելու։

Յունիսի 10-ին, թէ 15-ին, չեմ յիշում, Մուրադը ինձ կանչել էր իր մօտ, մերձակայ գիւղը. տեսնուեցի իր հետ։ Խորհում էին՝ իւրաքանչիւր գիւղից 5 զինուոր վերցնել իրենց հետ և Գ ե օ մ ր ի գիւղին օգնութեան գնալ։ Միւս գիւղերի մասին որոշ չը գիտեմ, բայց մեր գիւղից 6 հոգի յանձնառու եղան գնալ. ափսոս միայն, որ ցանկացողներից ոմանք զէնք չունէին, ոմանց զէնքերն էլ լաւ չէին։ Մուրադը իր խմբով ու երեք վալադով անցաւ Գեօմրի։ Խմբի մեկնելուց մի օր առաջ՝ մէկ հարուրեակ կօզակ, պրիստաւը իր հետևորդներով և մեր գիւղից մի վալադ շտապեցին նոյն Գեօմրի գիւղին օգնութեան։ Կօզակը և պրիստաւը հասան յարձակման ամենատաք միջոցին, մի այնպիսի ժամանակ, երբ արդէն հազարաւոր Թիւրքերով շրջապատուած էր գիւղը։ Մեր գիւղացի վալադը, երբ հեռից նկատում է կռիւը, իսկոյն դիմում է հրամանատարին, թէ „Թիւրքերը պաշարել են գիւղը և մի քանի բոպէից կսկսի ջարդը“ հէնց այս խօսքի վրայ հասնում է պրիստաւը, Շախսուար բէկ, և յայտնում. „Ո՛չ, այդպէս չէ, դա ոչ թէ կռիւ է, այլ Գիօմրի գիւղի հայերն են, հրացանային վտրժութիւններ են անում“ Ի հարկէ, պրիստաւի խօսքը աւելի ընդունելի է լինում, քան հայինը։ Վալադ հայը, անհանգիստ, երբ մի քիչ էլ մօտենում են, կրկին դիմում է հրամանատարին, բայց պրիստաւը կրկին առաջ է գալիս ու հակառակ խօսում։ Երբ հրամանատարը զիջանում է վալադ հայի աղերսանքին, պրիստաւը ճարահատեալ, առաջարկում է դատարկ զալպ տալ, որից յայտնի լինէր, թէ ովքեր են։ Նրա խօսքը կրկին ընդունելի է լինում։ Կօզակը կրակում է դատարկ, Թիւրքերը իսկոյն նկատում են և սկսում են փախչել. կօզակը այլևս չի հետևում և կռիւը դադարում է։ Կօզակը մտնում է գիւղ, թէ ի՞նչ կորգադրութիւններ է անում,— ինձ յայտնի չէ. միայն, պրիստաւը մի երկու օր մնալուց յետոյ, վերադառնում է Մազրա։ Նրա դուրս գալուց մի քանի ժամ անցած՝ Թիւրքերը կրկին յարձակւում են գիւղի վրայ և քշում տանում են գիւղի նախիրն ու ոչխարը... Շատ պարզ է ուրեմն, թէ ի՞նչ դիրք է բռնում պրիստաւը և որպիսի ցածութեամբ Թիւրքերին սովորեցնում է յարձակման ժամանակը։ Պրիստաւը ինքը շատ լաւ հասկանում էր, որ եթէ նախիրն ու ոչխարը քշեն, կօզակը չի հետևի քշողներին։ Այդպիսով նա ուզեց սովամահ անել Գեօմրիում հաւաքուած հայերին (շրջակայ գիւղերից էին հաւաքել)։

Սովամահը ապրելու համար ամեն միջոցի կը դիմէ։ Խումբը արդէն հասած է լինում, ժողովուրդը քաջալերւում է. յարձակւում են խանի ոչխարների հօտի վրայ և քշում բերում են ոչխարը։ Թէ ի՞նչպէս են տեղի ունենում ընդհարումները, այդ մեր հերոս Մուրադը կը պատմէ։ 1905 թւի յունիս ամիսը Մազրա գիւղի համար յաւէտ յիշատակելի դարձաւ,— այդ ամսում յուսահարւեց, քաջալերւեց, զարկեց, զարկւեց ու վերջը ընդհատւեց իր ամբողջ ուժով... Ի հարկէ, որչափ հնարաւոր է հարիւր տուն ունեցող մի գիւղի։ Այդ ամսում Թիւրքերը իրենց սովորութեան համեմատ, շատ, սպառնալիքներ կարդացին։ Օր նոր՝ լուր նոր։ Մէկ օր նախիրը պիտի քշէին, միւս օր՝ ոչխարը, երրորդ օրը գիւղի վրայ պիտի յարձակւէին, կանանց ու երեխաներին պիտի սպանէին, տները աւերակ պիտի անէին, վրանները այսինչ կամ այնինչ տեղը պիտի խփէին և այլն։

Ցեղերից ոմանք էլ այլ կերպ էին խօսում, բոլորովին հաշտ լեզու էին բանեցնում։ Այսպէս էր ամսի սկզբի խօսակցութիւնը։ Առաջին փորձը եղաւ Շաղատ գիւղի նախրի վրայ. յարձակւեցին, հարայ ընկաւ գիւղերը, Շաղատ և Մազրա իրար շատ մօտ են։ Սկզբում յայտնի չեղաւ, թէ ում նախրի վրայ են յարձակւել։ Մազրեցին դուրս թռաւ. իր ապրուստը, յոյսը, իր կաթը, մածունը, իւղը,—բոլորը կորած էր։ Պետք էր փրկել։ Հարայը հասաւ, Թիւրքերը փախան, թողնելով բոլորը, բացի մի կովից, որ յաջողեցին փախցնել։ Հաւաքւեցան հարայի հասնողները, խորհուրդ արին. արժէ՞ արդէօք մի կովի համար կռիւ անել։ Ո՛չ. մենք կը բողոքենք կառավարութեանը, ասացին ամեն կողմից։ Ասացին ու դարձան դէպի գիւղ։ Նախիրը և կովը շաղատեցուն էր։

Անցաւ մի քանի օր,—կրկին հարայ, կրկին յարձակում շաղատեցու նախրի վրայ. այս անգամ բոլորովին անաջող։ Էլի մի երկու օր, էլի յարձակում,—այս անգամ երկու ոչխար տարան։ Ժողովուրդը սկսեց նեղւել ու սաստիկ բողոքել։ Բայց ո՞վ գիտէ, քանի ամսից պի-

տի լսէր բողոքը... Յունիսի 15-ն էր, թէ 16-ը, մի քանի թիւրք ձիաւորներ, Մազրայի արևմտեան դաշտով անցնելիս, տեսնում են պահնորդներին, որոնք հրսկում են տաւարի վրայ։ Թիւրքերը մտածում են նախ պահնորդներին զինաթափ անել և սպանել, ապա տաւարը քշել. յարձակւում են պահնորդների վրայ։ Դիմադրութիւնը լինում է յանդուգն ու համարձակ. թիւրքը գոչում է „անձնատո՛ւր“ և հրացանը ուղղում. պահնորդը ծունկ է չոքում և առում. „Մեղք ես, թող և ուղիղ ճամբովդ գնա. եթէ ոչ, չեմ խնայիլ“ Մինչ թիւրքը բերդան հրացանը ոտի է քաշում, հայը կրակում է և գլորում մէկի ձին։ Թիւրքերը խռնւում են իրար. մինչ այս մինչ այն, հարա՛յը գիւղն է հասնում։ Գիւղացիք կրկին դուրս են թափւում։ Թիւրքերը մի կերպ աջողում են վերաւոր ձին տանել։ Մութը վրայ է հասնում ամէն բան լռում է մթութեան մէջ։ Չէ պարզւում, թէ ո՞ր ցեղից են լինում յարձակողները։ Այս անգամ Ուսուբլու կոչւած ցեղից են դուրս գալիս մի 10—15 ձիաւոր և յարձակւում են դաշտ հերկողների վրայ, ասելով. ինչո՞ւ էք մեր դաշտերը հերկում։ Հայերը պատասխանում են, „20—30 տարի է, ինչ մենք այստեղ վարում ենք, ի՞նչպէս կլինի ձերը“... Թիւրքերը, մեզ անյայտ պատճառով, թոյլ են վերաբերւում։ Նրանք հեռանում են գիւղացիք իրենց արօրները բերում են ներքև, դրանից յետոյ սկսում են մնասել կանաչ արտերը, ոչխարն ու տաւարը լցնում են արտերի մէջ, կերցնել, փչացնել են սկսում գիւղացու ապաւէնը, որից պիտի գոյանայ տէրունական հարկը իր հագնելիքը, ուտելիքը, ապրուստը։ Հէնց այդ օրերը եկաւ գաւառապետը։ Ժողովուրդը, ղայրացած թիւրքերի այդ վարմունքից, գաւառապետին բողոքելու վճիռը տւեց։

Բողոքեցին։ Գաւառապետը փոխանակ լսելու գիւղացիների բողոքը, հայհոյեց նրանց՝ „բաւական չէ՞, որ թիւրքերի արօտատեղերը վարել էք, դեռ եկել նրանցից գանգատւում էլ էք, կը տեսնէք, թէ ես ձեզ ինչ կանեմ“։ Սպառնաց գազանը։ Հէնց այդ միջոցին գիւղացիներից մէկը խոնարհաբար ներկայացաւ իրեն ու ասաց՝ „մենք մեծ ուրախութեամբ կընդունենք, կպատւենք մեր հիւրերին, միայն խնդրում ենք զսպել ձեր կօզակներին, որ անպատիւ խօսքեր չասեն մեր հարսերին... Կրակը բորբոքւեց, գազանը մռնչաց, խռովեց։ Մազրեցոց յանձնեց թիւրքերի ձեռքը, հաւաքեց կօզակները, ինքը իր Շախսուարով վերկացաւ ու գնաց, անիծելով մազրեցիներին, որ խոնարհաբար գանգատւել են, որպէս իրենց ազատարարին։ Ահա գաւառապետն էլ այսպէս ցոյց տւեց իր գոյները։ Հաւատը փոխեց. այս անգամ գնաց դէպի թիւրքերը, թէ ի՞նչ խօսեց իր հաւատակիցների հետ, չգիտենք. միայն երբ վերադարձաւ Ղարաքելիսա, անմիջապէս ձերբակալել տւեց մեր տանուտէր Նահապետին և կօզակների դէմ գանգատւող Բախշուն։ Տանուտէրին հարցրելեն ինչո՞ւ էք թիւրքերի հողերը վարում։ Ձերդ մեծութիւն, ես այն ժամանակ տանուտէր չէի և եթէ հողը նրանցն է, թող մնայ իրենց, դրա համար գիւղացին ոչ մի ընդդիմութիւն չի ասում։ Տէրունական պաշտօնեաները թող քննեն և տեսնեն. թէ ում որ պատկանում է, թող նրան մնայ։ Մանրամասնութեաց մէջ չեմ մտնում. այստեղ ոչ մի հողային հարց չկայ և եթէ կայ էլ, թող օրինական կարգով քննիչ գայ ու որոշէ սահմանը և դրանով կվերջանար։ Ինչո՞ւ գաւառապետը այդ չարաւ... Այստեղ էլ պարզ է, որ նա չուզեց հարցը խաղաղ կերպով լուծել։ Գուցէ նա գիտէր, որ թիւրքերը մեզ վրայ պիտի յարձակւէին և նախապէս ինքզինքը արդարացնելու համար՝ հողային հարց մէջ բերեց։ Կրկնում եմ, հողային հարց չկայ, զուտ ազգային մի անվերջանալի հակառակութիւն է։

Տանուտէրը և Բախշին բռնեցին, կօզակները հեռացան։ Թիւրքերը քաջալերելով, խորհուրդ կազմեցին։ „Հա՞թ“ դուրս թռաւ ռամիկ, վայրենի, մոլեռանդ ամբոխի բերանից։ Հաւաքեցան բոլոր ցեղերից,—Մուրթուզը իր աւազակային խմբով, Նասրուլահ բէկը, բոլոր արիւնարբու գայլերը. հաւաքեցան նաև շրջակայ թիւրք գիւղերից։ Ոչ մի ցեղ անմաս չը մնաց։ Ինչպէս յետոյ յայտնւեց, իրենց որոշումն էր՝ աւարի մատնել Մազրա և Շաղատ գիւղերի ամբողջ գոյքը։ Յիշենք մի քանի ցեղերի անուններ, որոնք պատճառ են դառել յուլիսի 25-ի թալանի ու կոտորածին.

1. Ուսուբլու՝ գլուխ ունենալով Ալիքեզի Աբաս օղլին։ 2. Միրզանաղլու՝ Մամադ մոլլա Հասան օղլի, Իրզաղուլի Հասանղուլի օղլին։ 3. Ահմադալլար՝ Աբդուլլահ Ազիմ օղլին, Սալման Միրզա օղլին։ 4. Ղազախլար՝ Յիւսան Մուսա օղլին, Ալլահվերդի Ադամ օղլի։ 5. Մոլլա Մհառլամլու՝ Ալլահվերդի Իբրահիմ օղլին, Մոլլա Աբասս Իբրահիմ օղլին։ 6. Ալվերդիլար՝ Սարի Հաջի Սարը օղլի, Ասկար խան Մուրադ օղլի, Մոլլա Աշիմ Հաջի Բաբաքելի օղլի։ 7. Հաջալլա՝ Ալմուրադ Ղարաքիլի օղլի, Նասրուլլահ բէկ Քեաբիմ բայ օղլի։ 8. Աբսլու՝ Մրզաղուլի բէկ Աբաս բէկ օղլի, Ղահրաման բէկ Նաջաֆ օղլի, Քարման Աբաս օղլի իր եղբայրներով։ Ջաբրայիլու՝ Աբդուլահ բէկ։ Արիքլու՝ գիւղացիք և յայտնի աւազակ Մուրթուզա Քեալբալայի Նոդի օղլի։ Բախշալի Քեալբալայի Աբաս օղլի, Մամադալի Քեալբալայի փիրի օղլի, Ալիհիւսէին Քեալբալայի Փիրի օղլի։ Աւազակներ՝ Աղա Սամանդ օղլի, Աւդուլազիմ Ալմուրադ օղլի։ Յիշեալ Աւդուլազիմ Ալմուրադ օղլին Ահմադալլար ցեղից է։ Ահա այս ցեղերը իրենց պարագլուխներով կազմ և պատրաստ սպասում էին յարմար առիթի...

Յունիսի 25-ը, իրենց կարծիքով, տւեց այդ առիթը, յարձակւեցին միաժամանակ Շաղատու և Մազրայի վրայ, քշեցին տարան շաղատեցոց 92 գոմէշ, իսկ մազրեցոց 500 գառ 12 եզ 30 խոյ և մի հատ արու գոմէշ։ Գիւղացիք վայրկենապէս սթափւեցան, երբ հարայը հասաւ գիւղը։ Անօգուտ անցաւ բանտից ազատւած տանուտէրի խօսքը։ Ամէն մարդ իր գառն էր փնտրում, առանց որի ցամաք պիտի մնար։ Կային այնպիսիներ, որոնք աշնանը գառը պիտի ծախէին տէրունական հարկը վճարելու... Այս բոլորը գիւղացու մտքով անցաւ, ոչ օրի նա չը լսեց, վայրկեանները թանգ էին, պէտք էր վերադարձնել գախներն ու գոմէշները և Բայց ինչպէ՞ս։ Մի՞թէ աւազակները հեշտութեամբ յետ կը տային։ Այլևս չը մտածեցին երկար։ Որը հրացանով, որը փայտով, որը կացնով—դուրս թռան գիւղից։ Թուրքերը երբ տեսան գիւղից դուրս թափող ժողովրդին, կրակ բաց արին. վիրաւորւեց գիւղացիներից մէկը։ Կրակը սկսւեց երկու կողմից։ Թուրքերի մօտին հրացանի պայթիւնի ձայնը, գնդակների վզզոցը հասաւ շրջակայ հայ գիւղերի ականջին։ Սարսուռ պատեց բոլորին։ Մազրա գիւղը կոտորածի ենթարկւեց,—ամէն

որ այս էր գուշակում։ Լացն ու կոծը սկսւեց։ Շաբաթ օր, ժամի 12 էր։ Ամէն ոք իր դիրքը մտած,— մէկը աշխատում էր իր սեփական ապրանքը յետ խլել, միւսը խլածը յետ չը տալ։ Ինչպէս վերը յիշեցի, կռիւը սկսւեց յունիսի 25-ին շաբաթ ցերեկւայ ժամը 12-ին։ Այդ օրը առաւօտեան Մուրադը իր խմբով իջաւ մեր գիւղը։ Կռիւը սկսւելուն պէս, գիւղի նորակազմ զինւորներով նա գրաւեց յարմար դիրքեր։ Կռւի առաջին րոպէներին նորակազմ զինւորները դիրքերից մէկը թողին և դրանով վտանգւեց Շաղատում եղած կօզակների դիրքը (որոնց հետ կային նաև մազրեցիներ)։ Այդ երկու դիրքերի մարդիկ բռնեցին մի այլ դիրք, որը վնասաբեր եղաւ մեզ. Մուրադի խմբի անդամներից երեքը մեր կողմն անցան, այդտեղ կրկին երկու մասի բաժնւեցան. յաջողեցին ձեռք բերել մի մի դիրք, որով յաղթութիւնը մեր կողմն անցաւ. Թիւրքերը սկսեցին փախչել, այս անգամ Մուրադը չը կարողացաւ համբերել, դուրս թռաւ դիրքերից, խլեց մի ուրիշ դիրք, որից յետոյ սկսւեց թիւրքերի կատարեալ ու կանոնաւոր փախուստը։ Մուրադի աջ թևի վրայ գտնւող խումբն էլ դուրս եկաւ դիրքից, սկսեց հալածել թիւրքերի արանքը, իսկ ձախ թևինը և իր մօտ գտնւողները յարձակւեցին վրանների վրայ։

Մուրադը իր խմբով հրճւում էր վրանների վրայ յարձակւող գիւղի նորակազմ զինւորների վրայ, որոնք իրենց արծւի թևերի պաշտպանութեան տակ էին առել ամեն բան... և ահա յանկարծ զինւորական փողի արձագանքը բոլորին թուլացրեց։ Սարի գագաթին երկու ձիաւոր ենևացին։ Հայ դիրքերից կրակ արին, որից ձիաւորները փախան. այս անգամ ուժգին կերպով լսւեց փողի ձայնը և կօզակները խմբովին երևացին նոյն գագաթին։ Հայերը յետ քաշւեցան, թողնելով թուրքերի տաւարը, որովհետև կօզակները մեզ թուրք կարծելով, սկսեցին կրակել, և վիրաւորեցին մի հոգի։ Կռիւը դադարեց 6 ժամ յետոյ։ Այժմ մնում է ինձ այստեղ պատմել սպանւածների և վիրաւորւածների մասին։ Մեզնից վիրաւորւած են 5 հոգի, մէկը՝ ծանր, միւսները՝ բոլորովին թեթև։ Ծանր վիրաւորը Ալիլու գիւղացի Գասպար Աւագեանը։ Վիրաւորւած է ձախ ազդրից, մօսին գնդակով, ազդրի ոսկորը կոտրւած է։ Գիւղում կանոնաւոր վիրաբոյժ չը կայ։ Բժշկութիւնը կատարւում է պառաւների ձեռքով։ Կռւի 3-րդ օրը եկաւ գաւառապետը. իր խօսակցութիւնը կրկին հողային հարցի շուրջն էր. երբ գիւղացիք պատասխանում էին, թէ ոչ մի հողային հարց չը կայ. այլ թէ, որովհետև մեր գառը, եզը տարան, մենք չը կարողացանք համբերել. գնացինք վերադարձնելու սկսւեց կռիւը։ „Գաւառապետը պատասխանեց. ես ձեզ չասացի՞ մի գնաք. գիւղացին լռում է, իր ներքին գրգիռը պահելով իր մէջ։ Ինչ անէ։ Հարցրեց նաև պահեստի զինւորներին, ցուցակագրեց և գնաց թուրքերի մէջ. սահմանագլխում ծեծեց մեր գիւղացիներից երկուսին, թէ“ ինչո՞ւ էք այստեղերը վարել“։ Գիւղացին ի՞նչ անէ։ Թիւրքերի միջից կրկին վերադառնում է, այս անգամ կատաղած և փրփրած, թէ՝ „ինչո՞ւ էք սրով կտրել նրանց կանանց. ինչո՞ւ էք նրանց թալանել. բերէք թալանը յետ տւէք“։ Պատասխանում են, մենք թալան չենք արել. կին չենք կտրել, գուցէ դիտմամբ իրենք են արել։ Այս անգամ սկսեց մի շարք անուններ կարդալ և այնպիսի անձանց անուններ, որոնք Բագու էին գնացել։ Դրանց մատնել են թուրքերը։ Ի վերջոյ զատեց 6 հոգի, ձերբակալեց նրանց և իր հետ բերաւ, թողնելով այնտեղ պրիստաւին և 36 կօզակ։

Ուրախ էր Շախսուարը, ասպարէզը իրենն էր։ Կատարւեց իր դիւային ծրագիրը, երկու խաղաղ միատեղ ապրող ժողովուրդ ձգեց իրար. „Ջուրը պղտոր է, պէտք է ձուկ որսալ“,— ահա իր սատանայական միտքը. „ես ձեզ պիտի հաշտեցնեմ. ընդհարումները կաւելանան, երկու կողմից էլ կը վնասւիք“... արդեօք ինչե՞ր կան այս խօսքերի տակ։ Շրջակայ գիւղերից հաւաքւեցին հայ, թուրք, միամիտ ներկայացուցիչներ՝ Շախսուարի հրամանը կատարելու։ Գալերը հաւաքւեցին, խորհուրդ արին հրաման արձակեցին. մազրեցին 1500 մանէթ տայ՝ թուրքերին տարած տաւարը փոխանակելու։ Եզը մղի էր, ծնաւ մի հորթ բերեց... որովհետև Շախսուարն էր ասողը, պէտք է հաւատալ, մանաւանդ պէտք է ընդունել, եթէ ոչ՝ ինքը կը հեռանայ և գործը վատ կը լինի։ Խե՛ղճ մազրեցի. արտերդ փչացնեն, գառ, եզ, խոյ, տանեն, պատիւդ ոտնատակ տան, դու էլ դեռ 1500 մանէթ տաս... ահա թէ ի՞նչ է մտածում անել քեզ քո պրիստաւ Շախսուարը... Սրա արարքները պատմելու համար, հարկաւոր է անվերջ համբերութիւն։ Իր կինը պահում է վրանաբնակ ցեղերի մէջ։ Գուցէ իր կնոջ համար փրկանք է ուզում, Շախսուարը գիւղացուն խեղդելու լաւ ժամանակն է գտել։ Գիւղացու ամբողջ ձմեռւայ պաշարը դաշտն է, խոտը հնձելու ժամանակը անցել է. դեռ չէ հնձւել. ազատ դաշտը չէ կարող դուրս գալ։ Շախսուարը կաշառք է ուզում, ո՞ւր և ո՞ւմ դիմէ։ Գիւղի ձեռնհաս մարդիկ ձերբակալւած են։ Պէտք է միջոցներ ձեռք առնել այս պրիստաւին այստեղից հեռացնելու։ Գիւղը ոչնչանում է, թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Թուրքերի կողմից՝ սպանւած և վիրաւոր՝ մօտաւորապէս հաշւում են 50 հոգի։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ԶԻՎԱՆՇԻՐԻ ԳԱՒԱՌՈՒՄ

(Դէպքերի սկզբնաւորութիւնը)

I

Վանք գիւղի մօտ գտնում են նոյն գիւղի մի տաւարածի դիակը՝ գլխատւած։ Լուր է գալիս, թէ հայի գլուխը տանում էին իրենց հետ այդ միջոցին քոչող թարաքամաները։ Զինւած վանքեցիք հասնում են քոչի յետևից, խուզարկում են բեռները և յիրաւի գտնում են տաւարածի գլուխը ջուալի մէջ դցած։ Այստեղ կռիւ է սկսւում հայերի և թարաքամաների միջև։ Իսկոյն և եթ հայերը կտրում են Սարաթղեազմող կիրճը և թոյլ չեն տալիս մնացած թիւրքերին սարից իջնել։ Երկու օրւայ ընթացքում, ով ում պատահում է՝ հայը թիւրքին, թիւրքը հային՝ գետին են թաւալում. Վանքից մինչև Թու դեռդուկը. հայերը թիւրքերից քշում-բերում են հարիւրաւոր տաւար։ Այդ ժամանակ Աղդամի կողմերից նեղւած թիւրքերին օգնութեան են գալիս բազմաթիւ ձիաւորներ, որոնց առաջը կտրում են կօզակները Թու դեռդուկում, մինչև որ հաշտութիւն է կայանում։

Վերոյիշեալ դէպքերի ժամանակ մեծ դեր են կատարում մեր ‚Թռուցիկ՝ խմբերը. այժմ գիւղացիներն իրենց աչքով նկատեցին, թէ որքան օգտակար են „Թռուցիկները“, և ոչ թէ այն սիստեմը, որով ամեն մարդ իր գիւղումն էր մնում, իր համար էր միայն մտածում։ Սուրհանդակները

հենց առաջին օրը իմաց են տալիս խաչենցիներին, Ջրաբերդցիներին և գիւլիսանցիներին, որ ամեն մարդ զգաստ լինի։ Այդ կողմերում այժմ ամեն տեղ մարդիկ պատրաստ են պատահարների դէմ մաքառելու։ Սակայն հրահանգուած է, որ զուր տեղից կռիւ չանեն։

II

Վանքի մօտ պատահած դէպքից յետոյ, ուր մերայիները մեծ վեհանձութիւն ցոյց տուին, թիւրքերը սպանեցին 8 հա Զորում երեք անմեղ հայերի։ Մի քանի օրից յետոյ նոյն տեղում սպանուեց հայերի ձեռքով թիւրքերի առաջնորդը։

Դրանից քիչ յետոյ Աղդամի թիւրքերը սկսում են կանգնեցնել անցնող բոլոր հանրակառքերն ու փայտանները, թալանում են հայերին և արգելում են նրանց ճանապարհը շարունակելու։ Այս բոլորը կատարւում է փոխ-Նահանգապետի ներկայութեամբ, որին նոյնպէս թիւրքերը կանգնեցնում են Աղդամում։

Երբ Շուշու ընդհարման լուրը տարածւում է, թիւրքերը ամեն կողմից դիմում են դէպի Շուշի, բայց հայերը կարելով Ասկեարանի կերճը և „խանին բաղը“, թոյլ չեն տալիս նրանց Շուշի գնալ։ Փոխ-Նահանգապետին նոյնպէս արգելում են, սկզբում չը ճանաչելով նրան, բայց յետոյ բաց են թողնում։ Օգ. 18-ին բազմաթիւ թիւրք ձիաւորներ հաւաքւում են Թարթառ, և մզկիթում խորհրդակցելուց յետոյ, մի մասը դիմում է դէպի Շուշի, բայց կանգ է առնում Ասկեարանի հայ քուչերի առաջ։ Վճռեցինք մեր „թռուցիկներին“ շարժման մէջ դնել և ղրկեցինք պաշտպանելու այն գիւղերը, որոնք գտնւում են տափարակի վրայ։

Քեօլանի թիւրքերը առաջարկում են, որ եթէ մենք պահենք, կը գնան և դաշտաբնակ թիւրքերից հարիւրաւոր տաւար կը գողանան, բայց մենք մերժեցինք, չուզենալով բարդութիւններ առաջացնել։

Ի՞ՆՉ ԴԱՍ ՏԻԵՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երեւան, օգոստոս 30.

Դուք արդէն ծանօթ էք թիւրք ժողովրդի և ռուս կառավարութեան բռնած դիրքին դէպի հայերը։ Սակայն ի՞նչ են անում իրենք հայերը, որոնց գլխին թափւեցին այդ անսպասելի հարուածները։ Անսպասելի ենք ասում, որովհետև այնքան միամիտ, անհեռատես էինք, որ անտեղեակ մնացինք, ոչ մի գաղափար չունէինք մի շարժման մասին, որ երկար ժամանակից ի վեր նախապատրաստւում էր համիսլամականների և ռուս կառավարութեան ստոր ներկայացուցիչների կողմից։ Զբաղւած լինելով միանգամայն տարբեր ծրագիրների իրագործումով, մեր յեղափոխական կոմիտէներն ու գաղափարական երիտասարդութիւնը անտես էին առել նենգ թշնամուն, որ դարան էր մտել հենց մեր կողքին։ Իսկ հայ բուրժուազիան և հայ հասարակութեան պահպանողական տարրը, որ միշտ հակառակ է եղել յեղափոխականներին, ազատագրական գաղափարներով տոգորւած երիտասարդութեանը,—սովորական ինքնագոհ մեծամտութեամբ նայում էր իրերի դրութեան և երբէք իրեն չէր թոյլ տալիս մտածելու, որ թիւրքերը այսքան երկար տարիներ հարևաններ լինելով և տնտեսական կապերով շաղկապւած հայերի հետ՝ ձեռք կը բարձրացնեն հայերի վրայ։ Բնաւ։ Նա համոզւած էր, որ ռուս կառավարութիւնը, իբր թէ նախանձախնդիր կովկասի կուլտուրական զարգացմանը, ոչ միայն պաշտպան չէր հանդիսանայ թիւրքերին, այլ և թիւրքական շարժումը հայերի դէմ հենց իր սաղմում կը ոչնչացնէր։

Սակայն ահա տեղի ունեցան Բագուի փետրուարեան դէպքերը։ Դա մի անսպասելի հարուած էր, որ շանթի նման զարկեց հայ ժողովրդին. զարկեց և սթափեցրեց։ Հայերը անպատրաստ էին բոլորովին այս նոր անսպասելի թշնամու դէմ կռւելու, բայց և պէտք էր ինքնապաշտպանութեան բնազդը ստիպեց կռւել և շնորհիւ հայերի վերջին օրերին ցոյց տւած դիմադրութեանը, թիւրքերը ստիպւած եղան հաշտութիւն կայացնել։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս հայ բուրժուան, հայ յետադէմը, փրփուրը բերանին, գրգռւած աղաղակում էր. „Ի՞նչ են անում մեր յեղափոխականները, մեր հայ տղերքը. ինչո՞ւ են լռել, ինչո՞ւ չեն իրենք էլ թիւրքերին հարւածում“։ Այսպէս էին ասում նրանք, որոնք իրենց կեանքում երկու կոպէկ չէին տւել հայ յեղափոխականներին՝ զէնք գնելու. այսպէս էին ասում նրանք, որոնք մի քանի օր առաջ տակաւին ճառեր էին ասում Բագուի հայ յեղափոխականների հասցէին, երբ սրանք նախօրօք ինքնապաշտպանութեան միջոցներ էին ուզում ձեռք առնել մօտեցող թիւրքական յարձակումների դէմ, սաստում էին, չը լինի թէ կոմիտէները խառնւին գործի մէջ և առիթ տան թիւրքերին հայերի դէմ գրգռւելու։ Բայց երբ Ալալյանի, Ադամեանի այրւած դիակներն ու հարստութիւնները նրանց յիշեցնել տւին, որ իրենց էլ կարող էր նոյն բախտը վիճակւել, նրանք սթափւեցին և նեղն ընկած՝ դիմեցին յեղափոխականներին։ Դիմեցին յեղափոխական կազմակերպութիւններին, որովհետև Բագուի դէպքերի միջոցին, երբ չորս կողմը լաց ու շիւան, փախչող փախչողի վրայ էր, նրանք տեսան, որ մի փոքրիկ խումբ հայ յեղափոխական զինւորները կարողացան կռւել համեմատաբար շատ ուժի դէմ, երբեմն նոյնիսկ անսպասելի յաջող հարւածներ տեղալով թշնամու գլխին։

Մենք համոզւած ենք, որ այսուհետև, չը նայած վերոյիշեալ դժւարութիւններին, մանաւանդ ռուս կառավարութեան հալածանքներին և խուզարկութիւններին, մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը աւելի խանդով կը տարւի, աւելի ինտենսիվ մի գործունէութիւն առաջ կը գայ հայ խմբերի համար։ Մեր ամբողջ պատմութիւնը, մեր գլխին եկած վերջին դէպքերը ցոյց են տալիս, որ այլևս ուրիշ ճանապարհ չը կայ մեր կեանքի ու գոյքի ապահովութեան և փրկութեան համար։

Զէ՞նք, զէ՞նք և ինքնապաշտպանութեան մարտական խմբեր—ահա թէ ինչ պէտք է լինի իւրաքանչիւր հայի նշանաբանը։ Եւ ուրախալի է, որ այսօր իւրաքանչիւր հայ, սկսած մեծից մինչև փոքրը, հարստից մինչև աղքատը, գիւղացին քաղաքացին, ներշնչւած է այդ գիտակցութեամբ, այդ հաւատով։ Այլապէս չի էլ կարող լինել։ Այսօր ասպարէզի վրայ դրւած է հայ ժողովրդի գոյութեան հարցը, հայի լինել կամ չը լինելը։ Մի՞թէ սրանից յետոյ էլ տակաւին տատանումներ կարող են գոյութիւն ունենալ։ Արդեօք այդ ինքնապաշտպանութեան միջոցների խրոխտութիւնն ու զէնքի շաչիւնը չէ՞ պատճառը՝ որ շատ տեղ թիւրքերը հաշտութեան, համերաշխութեան մասին են խօսում կեղծ դիմակներով, խորը համոզւած լինելով, որ եթէ իրենք սկսեն նորից դէպքերը, այն ժամանակ մի դառն դաս կը ստանան կռւողներից։

Հայերը չեն սկսել կռիւը. հայերը չէին ուզում և

մաքերովն էլ չէին անցկացնում երբևիցէ Կովկասում ընհարել թիւրք տարրի հետ, ազգայնական-քաղաքական հողի վրայ։ Հայերը զբաղուած էին այլ ցաւերով, պատրաստութիւններ էին տեսնում այլ քաղաքական կռիւների համար։ Սակայն թիւրքերը, կարճամիտ ղեկավարների թելադրութեամբ, իրենք սկսեցին մի կռիւ, որի հետևանքների պատասխանատուութիւնն իրենց վրայ է ընկնում։ Հայերն ստիպուած էին ընդունելու այդ կռիւը և այսուհետև երբէք այլևս զէնքը ձեռքից վայր չեն դնի։ Ռուս կառավարութիւնն ուզեց այդ և հասաւ իր նպատակին։ Կովկասի երկու մեծ ժողովուրդների միջև բացել է մի խորունկ վիհ, մի անդունդ, որը, ո՞վ գիտէ, երբ կը ծածկուի։ Կայծն ընկաւ և բորբոքուել է մի սոսկալի հրդեհ։

Ամեն մի հայ թո՛ղ այժմ համոզուած լինի, որ այլևս կոմպրոմիսի, տատանման ժամանակ չէ. այստեղ ժողովրդի գոյութեան հարց է դրուած, որի պատասխան լուծման համար մենք պէտք է զոհենք ամեն բան։ Եւ ցարի բռնապետութեան ջատագովները Մէֆիստոֆի խնդումով զարձանում են տեսնելով երկու ազգերը բաժանող մեծ վիհը։ Այդ վիհը երբէք չի լցուի, չի ոչնչանայ, մինչև որ գոյութիւն ունի ռուս բռնակալութիւնը։ Թո՛ղ ուրիշն կորչի այդ բռնապետական ռէժիմը, թող տապալուի ցարի ու ժողովրդի արիւնը ծծող բիւրոկրատիայի հիմքը։ Եւ երբ այդ աւերակների բեկորներով կը լցուի մեր երկու թշնամի ժողովուրդներիս բաժանող վիհը, այն ժամանակ իրաւունք կ'ունենանք սպասելու մշտական խաղաղութիւն, ա՛յն ժամանակ միայն կը հանգստանան բորբոքուած մահաբեր կրքերը...

Հայերի մէջ սկսուեց մի նոր շարժում։ Ամենը տեսան, որ իրենց դէմ կանգնած է մի նենգ թշնամի, որը գործում է և պատրաստւում ցարի կառավարութեան լռելեայն համաձայնութեամբ, նոյնիսկ երբեմն նրա օժանդակութեամբ։ Ցեսան, որ իրենց գլխի ճարն իրենք են տեսնելու։ Կազմակերպուեցին ինքնապաշտպանութեան խմբեր, առաջ եկան յատուկ յանձնախմբեր՝ ժողովրդին զինելու, նրան զէնքեր մատակարարելու նպատակով։ Բուրժուազիան ևս անտարբեր չը մնաց։ Նուիրաբերութիւններ եղան նոյն նպատակով... յեղափոխական տեղական կոմիտէները լաւ ըմբռնելով իրենց պատասխանատու պարտաւորութիւնները, կազմեցին մարտական խմբեր, թռուցիկ մասնախմբեր, ուղարկեցին գաւառները մարզիկներ, որոնք կազմակերպում են գիւղացիներին, զէնք բաժանում, հսկողութիւն անում և այլն։ Այս բոլորը շատ մխիթարական է։ Անենք գոնէ այն, ինչ որ հնարաւոր է, ինչ որ մեր ձեռքից գալիս է, թէև, թշնամու թիւն ու զինաւորութիւնը աւա՜ղ միշտ գերակշռելու է...

Ի հարկէ, այն ժամանակամիջոցում, որ մենք ունէինք մեր տրամադրութեան տակ, նոր ազգէների ու կոտորածների հեռանկարներն աչքերիս, անհնարին էր զինել հայ ժողովրդին և պատրաստել մի թշնամու դէմ, որ ամբողջ տարիներով պատրաստւել էր ու կազմակերպել զէնքերի բաշխումը։ Մի կողմից ժամանակի սղութիւնն, իսկ միւս կողմից զէնքի պակասութիւնը մեծ դժուարութիւն էր յարուցանում մեր նպատակների իրագործման համար։ Զինւում են այսօր ոչ միայն հայերն ու թիւրքերը, այլ ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը։ Մօտալուտ յեղափոխութեան ուրուականը Ռուսաստանում, ստիպում է բոլոր ազգութիւններին զինուել ու նախապատրաստական միջոցներ ձեռք առնել իրենց անձն ու գոյքը պաշտպանելու ամեն տեսակ բաշիբոզուկների ու սրիկաների դէմ, որոնք վերջերս այնքան յանդուգն են դարձել։ Պարզ է, որ ամբողջ Ռուսաստանի շուկայում զգացւում է զէնքի պակասութիւն, իսկ եղածների գներն էլ չափազանց բարձրացել են, և վաճառւում են կրկնակի, երբեմն իսկ եռակի գներով։ Կառավարութեան ձեռք առած միջոցները, անընդհատ խուզարկութիւնները նոյնպէս խանգարում են Ռուսաստանից զէնք բերելու գործին։ Թիւրքերը մեծ մասամբ զէնք ձեռք են բերում իրենց կրօնակիցների միջոցով՝ Թիւրքիայից ու Պարսկաստանից։ Բայց և այնպէս հայ յեղափոխական կազմակերպութիւնը ոչ մի ջանք, ոչ եռանդ չէր խնայում իր պարտականութիւնները աւելուրջ կերպով կատարելու և ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը ամուր հիմքերի վրայ դնելու համար։

Եւ փաստերը յետագայում ցոյց տուին, թէ ինչ կը նշանակէ լաւ պատրաստուել ու զինուել ինքնապաշտպանութեան համար։ Նախիջևանի և Երևանի դէպքերը, որոնք հեռաւոր արձագանք էին Բագուի դէպքերի, պարզ ապացոյցներ են, թէ ինչ քաջագործութիւններ կարող են անել նոյնիսկ փոքրաթիւ յեղափոխականները, զինուած խմբերը։ Այն բոլոր տեղերում, ուր հայերը կազմակերպուած էին, ուր ինքնապաշտպանութեան խմբեր էին կազմել, այնտեղ միշտ յաղթող էին և կամ չնչին վնասներ էին կրում ու սոսկալի դասեր էին տալիս թիւրքերին։ Իսկ այն բոլոր տեղերը, ուր հայերը մեծ վնասներ են կրել, սպանութիւնների ու թալանի ենթարկուել, զուրկ են եղել ինքնապաշտպանութեան միջոցներից։

ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

25 սեպտեմբերի

Թիւրքերը ամենայն եռանդով զինւում են և այն՝ ափաշկարայ, ոստիկանութեան գիտութեամբ։ Վերջինս իր ամբողջութեամբ թիւրքերի կողմն է։ Սակայն, չը նայած մի քանի ազդարարութիւններին՝ յարձակումը դժուար թէ շուտով սկսուի։ Բանը նրանում է, որ թիւրքերը համոզուել են, թէ իրենց արդի ուժերով դժուար կը յաջողուն գլուխ հանել հայերի դէմ։ Ամեն տեղ նրանցից անհամեմատ աւելի մեծ թւով զոհեր են ընկնում։

Գաւառում՝ թիւրք յայտնի բէկերի մօտ (Բահոթուր բէկ, Ագրգեօզալով և ուրիշներ) համագումար ժողովներ են եղել, ուր, ասում, են ընդունել է հետևեալ ծրագիրը. հէնց որ Գանձակի մէջ սկսուի թիւրքական նախայարձակը, գաւառի թիւրքերը պէտք է շարժուեն երկու ուղղութեամբ,—դէպի Շուշի և դէպի Գանձակ, աւերելով ճանապարհին բոլոր հայ գիւղերը։ Թիւրքական կազմակերպութիւնը աճում է. նրանք կազմում են ձիաւոր խմբեր, կամաւորներ են հրաւիրում հեռաւոր տեղերից, որոնցից ամեն մէկին տալիս են ձի, զէնք, 50 ռուբլի փող և թալանի մի մասը։ Շարունակում են միաժամանակ պրոպագանդ անել սիւննիների մէջ,— մինչև օրս, բարբարխտաբար, ապարդիւն։

Գեներալ Տակայշվիլին դուրս եկաւ Նակաշիձէի քրոջ

որդին. երևակայեցէք, թէ ինչ զգացումներ նա կարող է ունենալ հայերի նկատմամբ... Հարուստակ գանգատւում է հայերից, համարելով նրանց խռովութիւնների պատճառ։ Թիւրքերի վայրագութիւններին այնքան են ընտելացել, որ դա համարում են մի շատ բնական երևոյթ։ Նորութիւնը՝ հայերի դիմադրութիւնն է և տեղ-տեղ նրանց կատաղի նախայարձակը...

Հուշեայ շրջանում ոստիկանական բարձր պաշտօնները Տակայաշվիլին բաժանել է թիւրքերին, որոնցից մի քանիսը առաջնակարգ աւազակների հռչակ ունեն։ Եալխա-Հուշու ճանապարհի հսկողութիւնը յանձնուած է յայտնի աւազակ Աբբաս-բէկ Վեզիրովին։ Էլ ո՞վ սիրտ կանի մենակ ճամբորդել արքունական ճանապարհով... Այնտեղ սպանեցին ի միջի այլոց մի գերմանացու և մի ինտելիգենտ հայի, Ս. Գանչեցեանին։

Հայերը ակն ընդ ական-ով են վարւում թիւրքերի հետ։ Ուրիշ ճար չը մնաց։ Թող անգործ պոռոտախօսները — հայ և օտար—մեղադրեն մեզ, թող նրանք ճչան ու աղաղակեն Դաշնակցութեան տաքտիկի, նրա զինուորների նեղսրտութեան ու անզթութեան առթիւ... Ո՞վ է նրանց ականջ դնողը այս սարսափելի տագնապի միջոցին։

Ասկեարանի նշանաւոր ճակատամարտից յետոյ, ուր Վարանդի, Խաչենի ու Ջիվանշիրի ուժերը, Համազասպի առաջնորդութեամբ փառաւոր դաս տուին 1000-ից աւելի ձիաւոր թիւրքերին, հայերը աւերել են և մի շարք թիւրք գիւղեր։ Կուսապատում քիչ առաջ տեղի է ունեցել ընդհարում, ուր սպանուել է 8 թիւրք. մերոնք կորցրել են միայն մէկ ձի, ռումբերով բարձուած։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Օգոստոս 28.

Հունձը սկսւեց։ Հունձ հայ գիւղացու և հունձ սալաֆատէրերի։ Մէկը հնձում, կալում, կալսում է իր արիւն քրտինք աշխատանքի արդիւնքը, միւսը շահագործում՝, տանում է այդ դառն, գիշեր-ցերեկւայ տանջանքի պտուղը։ Բոլոր յոյսերը խորտակւում են, ակնկալութիւնները ոչնչանում ու դարձեալ նոյն դատարկ փեթակը, նոյն քաղցածութիւնը... Ե՞րբ պիտի վերջանայ այս ճակատագրական թշւառութիւնը։ Սև ու դառն մի կեանք, անասնական մի գրութիւն, որ միշտ նոյնն է, միշտ շարունակելի. ո՛չ կեանքն է սպառւում, և ո՛չ թշւառութիւնն է պարպւում։ Հօտերի պէս անձայն, անլեզու ու անիրաւունք՝ քշում է նրան և կառավարութիւնը, և՛ քիւրդը, և՛ աղան, և՛ շեյխը և՛ զոլամը։ Ո՞ւմ խօսէ, ո՞ւմ բողոքէ. մէկը քան միւսը վայրագ—մէկը քան միւսը բարբարոս, մէկը թիկունք միւսին։

Խեղճ հայ ժողովուրդը գլխիկոր, հլու, անձայն անմռունչ կերպով տանում է բոլոր զրկանքները, բոլոր վայրագութիւնները, որպէս մի մեքենայ, որը ինքն ևս չը հասկանալով իր արածը՝ կատարում ու տանում է ամեն պատահար։ Երկաթէ՛ դիմացկունութիւն, որ երբէք չէ խորտակւում։

Հունձ է։ Բայց ի՞նչ է շահում այդ հնձից հայ գիւղացին. կալի մէկ կողմ մտրակը ձեռին կանգնած է կառավարութեան զաբթիան, միւս կողմը՝ ջուալի բերանը բացած՝ սպասում է քիւրդ սալաֆատէրը՝ աղայի ղոլամը։ Ու կալսում է նա, բայց հէնց նոյն րոպէին դատարկւում է կալի մէջ դիզուած ցորենի ահագին շեղջը. և նա դարձեալ գլխիկոր ու բաղցած՝ դիմում է դէպի մութ խրճիթը։

Ձմեռւայ համատարած սովը հարկադրեց հայ գիւղացուն, իր ընտանիքը սովամահ չանելու համար, դիմել հրէշաւոր սալաֆին։ Սալաֆը, որից թէև սարսռում է նա մինչև ոսկորների ծուծը, բայց ստիպուած է առնել, չը մեռնելու, չը ոչնչանալու, իր „ձեթիկիկ ճժերը“ սովամահ չանելու համար. ու այժմ կրկնակի քակւում է իր տունը։ Սալաֆատէրի պայմանները դժոխային են. 10 դահեկան դրամի համար 1 արաղի չափ հացահատիկ պէտք է տալ և վերջը, մի չափ հացին 2 չափ ևս աւելացնել. իսկ տոկոսին տոկոսը ևս հաշւելով, տւած մէկին ստանում են 4։

Երկրորդ ցաւը միլթեզէմներն են, որոնք կառավարութիւնից դրամով գնում են գիւղերը. սրանք արդէն իրենց վայրագութեան չափն ու սահմանը կորցնում են։ Բոլոր եկամուտների—նոյնիսկ ամենաչնչին բերքերի համար նշանակւում է տուրք։ Ամեն պտղատու ծառին — ծիրան, տանձ, ինձոր և այլն— նշանակւում է 20—30 դահեկան տուրք, այնքան՝ որքան բերք անգամ չի բերի այդ ծառը. այդ պատճառով գիւղացիք այդ ցաւից ազատւելու համար, ստիպուած են կտրատել բոլոր պտղատու ծառերը. Այժմ բոլոր հայ գիւղերը զուրկ են պտղատու ծառերից։ 20 մետրանոց պարտիզի համար նշանակւում է 30 դահեկան տուրք։ Այդ է պատճառը, որ շատ տեղեր գիւղացիք հրաժարւած են նրանից։ Զուրկ լինելով դրամից՝ հայ գիւղացիք ստիպուած են դիմել քիւրդ աղային, որը իւրաքանչիւր 10 լիրային 4 քիլէ ցորեն է պահանջում, որ ասել է թէ՝ երկու ամսւայ ընթացքում 100 լիրային տոկոս պիտի վճարէ 40 քիլէ ցորեն։

Երրորդ չարիքը՝ շէյխերի և աղաների զումբարան է, որով աշխատանքի այս հրատապ ժամանակին ամբողջ գիւղերին պարտաւոր են կացուցանում շաբաթներով աշխատել իրանց համար։ Շէյխէյիդ-Ալիի հազարաւոր արտերը քաշւում են հայ գիւղացոց ձեռքով։ Բացի այդ՝ նրան ունեցած 20 հազար ոչխարի համար խոտ, փարախ հայթհայթում են դարձեալ իր շրջապատի հայերը մշտապէս։ Սէյիդ-Ալիի զոլամները անցեալ օրեր, Եղեկիս գիւղը զումբարայ չը տալու համար յարձակւում ու թալանի են տանում գիւղի ոչխարների մի մասը։ Անցեալները դարձեալ օղանցիկ գիւղացոց զումբարայ չը տալու համար, գիւղի ռէսի վրայ հրացան են պարպում, բարեբախտաբար չի առնում։ Կարճկանը այժմ խաղաղացած է բաւականաչափ, որովհետև նոյն գաւառի յայտնի Մուսա-բէյը, 2 ամիս է հեռացած է գաւառից դէպի Շամզիրան, որպէս թէ Շէյխ-Մամէդ Սեգիխին տեսնելու։

Կաւաշի յայտնի շէյխ Ռաշիդը այս տարի աւերեց նոյն գաւառի Կիրիջ գիւղը, այնտեղ շինելով ոչխարի գոմեր։ Գիւղացոց անընդհատ բողոքները ոչ մի հետեւանք չունեցան։ Գայմագամը թոյլատրեց սրբազան շէյխին մշտապէս մնալ այնտեղ։ Այդ շէյխի լամուկը, որ Նարեկի խնդրոյ առթիւ բանդն էր, ազատ արձակեցաւ։ Կը տեղեկանանք, որ գայմագամը այդ և այլ խնդիրնե-

րի համար 200 լիրայ, կլանել շէյխից։ Կիրիջցիք կամաց-կամաց սկսել են գաղթել գիւղից դէպի Վանայ շրջակայքը։ Նոյն գաւառի Հիւսէյին աղա-քիւրդը սկսել է իր սրիկայութիւնները, իր հայագէտ ղուլամներին նա ուղարկում է գիւղեր, որոնք երեխաներին շաբաթ և հաց տալով, զանազան փախստական մարդկանց մասին է հարցնում ու հաւաքած տեղեկութիւնները անմիջական կերպով հաղորդում կառավարութեան։

Կաւաշի ժողովուրդը այս տարի ո՛չ մի արտ չի տուել միլլթէզիներին. բոլոր գիւղերի արտերը վերցրել են իրանք գիւղացիք. Կուլի խանի բոլոր ջանքերը իզուր անցան և նա, ասում են, իր տունը տրամադիր է փոխել դէպի Վան։ Գայմագամը այս տարի բաւական լարուած է Կուլի խանի դէմ նրա երկու տղաները այժմ փախստական են եղած։

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Մեր ձեռքն ընկած մի նամակ [1]), որ գրուած է Թիւրքական բանտերից մէկի քաղաքական հայ բանտարկեալների կողմից, բաւական բնորոշում է այն դրութիւնը, որի մէջ գտնւում են հայ քաղաքական կալանաւորները, այլ և այն խտրութիւնը, որ կառավարութիւնը դնում է հայ և Թիւրք բանտարկեալների միջև։ Այդ առիթով պատեհ ենք համարում մի քանի մանրամասներ առաջ բերել։

Ինչպէս կենտրօնական քաղաքների բանտերում գտնուող, նոյնպէս և բոլոր բերդերը աքսորուած հայ բանտարկեալները մեծ մասամբ քաղաքական յանցաւորներ են. իսկ Թրքական „օրէնքով“՝ քաղաքական յանցաւորների դատապարտութիւնը—լինի այն մէկ, Թէ „հարիւր ու մէկ“ առասպելական տարով—միշտ բերդարգելութեան (գալէպէնտ) անունով է տրւում, որը զգալիօրէն տարբերւում է հասարակ ոճրագործների դատապարտութիւնից, որ Թիապարտութիւն (քիւրէկ ճէզասը) է կոչւում։

Օրէնքը չէ Թոյլատրում բերդարգելութեան դատապարտուածներին քաղաքային բանտերում հասարակ ոճրագործների հետ խառնել, այլ Թելադրում է մի առանձին տեղ պահել, համեմատաբար աւելի մաքուր և աւելի լաւ պայմաններում։ Օրէնքի այս տրամադրութիւնը հետեւանք է այն ընդհանուր հայեացքի, որ քաղաքական յանցաւորները լինելով կրթուած մարդիկ, սովորական, մանաւանդ Թրքական բանտերի կացութեանը չեն կարող դիմանալ։ Իսկ բերդաքաղաքները ղրկելուց յետոյ՝ նրանք ազատութիւն պիտի ստանան նոյն քաղաքի ներսում—պարիսպի շրջանից ոչ-դուրս—ապրել և մասնաւոր պարապմունքով իրենց ապրուստը հոգալ. և եթէ դժւար է այնտեղ գործ գտնել, կառավարութիւնը պարտաւոր է իւրաքանչիւրին օրական չորս դահեկան դրամ տալ. դրա հետ միասին ոչէ քաղաքական յանցաւորի բերդաքաղաք աքսորելու դէպքում, եթէ նա Թողել է իր ընտանիքը տնտեսապէս անապահով վիճակի մէջ, կառավարութիւնը պարտաւորւում է որոշ նպաստով օգնել նրա ընտանիքին։

Սակայն, ինչպէս յայտնի է, Թիւրքիայում օրէնքները միայն գրած են, և կեանքի մէջ ոչ մի գործադրութիւն չունեն։ Այդ իսկ պատճառով հայ բանտարկեալները առհասարակ նպաստի վրայ յոյս դնել չեն կարող և նրանց միակ ձգտումը եղել է յարգել տալ օրէնքի այն կէտերը, որոնք տրամադրում են ա) քաղաքական յանցաւորներին չխառնել սովորական ոճրագործների հետ և բ) բերդերում ազատ շրջել։

Թիւրք քաղաքական յանցաւորների նկատմամբ այս կէտերը իրագործւում են։ Այս խտրութիւնից զատ՝ մի բան, որ աչքի է ընկնում, այդ այն է, որ հայ քաղաքական բանտարկեալներին չեն տրւում այնպիսի առանձնաշնորհումներ, որպիսիք վայելում են մահմէտական ոճրագործներից ընտրեալները։ Հայ բանտարկեալների բողոքները միշտ անլսելի են մնում և նոյնիսկ շատ անգամ հակառակ հետեւանքների հասցնում. նրանց ուէ դիմումը, ուղղուած պատրիարքին, կամ ուէ օտար հիւպատոսի՝ խիստ սուղ է նստում։ Այդպիսի մի յանդգնութեան համար հայ բանտարկեալները շղթայւում են օրերով, ամիսներով. մինչդեռ նոյն բանտում գտնուող մահմէտական մարդասպանները ազատ են, ոտքի օղակ իսկ չեն կրում, այն ինչ օրէնքով նրանք միշտ շղթայակապ պիտի լինեն։

Խտրութեան այս փաստը երբեմն հայ և մահմէտական տարրերի միջև թշնամութիւններ է յարուցանում, որոնք յաճախ վերջանում են կռիւներով։ Տուժողը դարձեալ հայերն են. նրանք Թէ ծեծւում են բազմաթիւ մահմէտական բանտարկեալներից և Թէ վերջը օրինական քննութեան ընթացքում ևս՝ յանցաւորներ են ճանաչւում կողմնապահ պաշտօնեաների շնորհիւ։

Հայ բանտարկեալները մի տարածուած սովորութիւն ունին. այն է՝ ահագին զոհողութիւններով հաղորդել իրենց դառն վիճակը Պօլսի պատրիարքին, համոզուած, որ վերջինի մի ցանկութեամբ իրենց դրութիւնը կը փոխւի։ Անցնում են տարիներ, բայց նրանց դրութիւնը մնում է անփոփոխ։—Նրանք նորից են դիմում պատրիարքին և նորից պատժւում Թիւրք պաշտօնեաներից, և այսպէս անվերջ...

Պատրիարքարանի միջամտութիւնը, այդպիսի երկրորդական խնդիրներում, պէտք է ասած, լաւ հետեւանքներ է ունենում։ Կառավարութիւնը աշխատում է փոքրիկ հարցերում բաւականութիւն տալ պատրիարքին, մեծ և կարևոր հարցերում մերժելու որոշմամբ։ Դրժբախտաբար երկչոտ պատրիարքը յաճախ փոքրիկ դիմումներն էլ չի անում։

Ցոյսը բանտարկեալի մեծ ընկերն է։

Աշխարհի լոյսից զուրկ այդ կենդանի մեռածը խոնաւ ու մութ գերեզմանում իսկ՝ չի Թողնում իր միակ մխիթարութիւնը—յոյսը, նրան պահելով իբրև միակ անձեռնմխելի սեփականութիւն։ Մինչև որ գտնէ տարիներով փնտրած իր ազատ կեանքը և կամ մինչև որ մահուան վերջին կոչը սարսուռով մօտենայ խլելու նրա կենդանի շունչը՝ ընդ միշտ տանելով նրա այնչափ փայփայած ու ակնակալած „մեծ յոյսը“։

Ցոյսը սրտում, աչքերը դէպի հեռուն ուղղած՝ նամակագիրները ողբում են իրենց դրութիւնը։ Իսկ պատրիարքը — նրանց յուսոյ յենակէտը — շատ վաղուց է մոռացել հայ բանտարկեալի սև օրը։

Նա Սուլթանի ժպիտն է վայելում։

ՅԱՐԻՋԱՄԻ ԴԱՒԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թեհրան, 24 սեպտեմբերի

Բաւական ժամանակից ի վեր այստեղ հաստատւել է մի վրացի, որ ուղարկւած է Նովկասից շատ կասկածելի

1) Այս նամակն ամբողջութեամբ կը հրատարակենք յաջորդ համարում։

Խմբ.

պաշտօնով։ Նա շարունակ պրօպագանդ է անում պարսիկների շրջանում, գրգռելով սրանց հայերի դէմ։ Այդ տեսակ պրօպագանդի հետևանքը պիտի համարել՝ որ պարսիկները ղաթլի օրը պատրաստուել էին յարձակուել հայերի վրայ, որ սակայն կառավարութիւնը անմիջապէս արգելեց։ Բայց վրացին շարունակեց իր զզւելի քարոզչութիւնը։ Բագւի դէպքերը նրա համար լաւ առիթ եղան. յաճախ հաւաքում էր մօլլաներին և ասում նրանց. «տեսնում՞ էք, ինչպէս հայերը այնտեղ բռնաբարում, կոտորում են ձեր մայրերին ու քոյրերին, սրբապղծում են ձեր մզկիթները. զէնք առէք ձեռքներդ ու վրէժխնդիր եղէք»... Մի անգամ մօտերս, մօլլաների հետ նա կանչում է և Իմամջումայի տղին և սկսում է քարոզել նոյն ոգով, բայց այս անգամ փորձանքի է հանդիպում։ Իմամջումայի տղան ժողովից յետոյ գնում է թագաժառանգի մօտ և բոլորը պատմում նրան։ Թագաժառանգը գիշերով մարդ է ուղարկում, բռնել տալիս վարձկան քարոզչին իր բոլոր թղթերով, որոնցից յայտնւում է, որ նրան թելադրողը ռուսաց դեսպանատունն է։ Վերջինս միջամտում է՝ իր հպատակին ազատելու, բայց թագաժառանգը չէ յանձնում յանցաւորին, ասելով, որ պիտի պահէ նրան մինչև իր հօր, Շահի գալուստը... Այսպիսով բարձրաստիճան լրտեսը այժմ վայելում է պարսկական բանտի մութ ու խոնաւ մթնոլորտը։ Նման լրտես-քարոզիչներ երևան են եկել նաև Ղազվինում ու այլ քաղաքներում...

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԲԴԻՒԼ ՀԱՄԻԴ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Կայ մի բան, աւելի ահռելի. քան Ելդըզ-Քեօսկի ահռելի պայթումը,—դա այն սառն անտարբերութիւնն է, որով ընդունեց սպանութեան փորձի լուրը ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։ Ոչ մի յուզում,—նոյն իսկ այն շրջաններում, ուր իշխանաւորների աստուածային իրաւունքները անձեռնմխելի են հռչակւում. ոչ մի զայրոյթ, նոյն իսկ քաղաքական այն օրգաններում, որոնք սպանութեան բոլոր փորձերը նկատում են իբրև ոճրագործութիւն՝ աններելի ամեն տեսակէտից. ոչ մի ուրախութիւն՝ սուլթանի ազատման դիպւածի առթիւ, ոչ մի խղճահարութիւն ընկած զոհերի համար,—ոչինչ, բացի գերեզմանային լռութիւնից, որ մի խուլ բողոք է այն ճակատագրի դէմ, որի քմահաճոյքով Աբդիւլ Համիդը անվտանգ մնաց։

Ելդըզի հրապարակի վրայ դժոխային մեքենան սարքող տէրրօրիստը աջողութիւն չունեցաւ, սակայն Եւրոպայի տրամադրութիւնը պարզ ցոյց տուեց, որ հասարակական կարծիքը վաղուց էր դատապարտել Աբդիւլ Համիդին անարգ մահւան։ Ահա թէ ինչու ամբողջ կուլտուրական աշխարհը ընդունեց պայթումը, իբրև անաջող գործադրութիւն մի վճռագրի, որ կայացրել էր միաձայն հանրամարդկային խիղճը։

Աբդիւլ Համիդը Եւրոպայի աչքում մի թագաւոր ոճրագործ է, որի համար չէ սովորական արդարադատութիւնը, որին կարող է Լինչի օրէնքով պատժել ամեն մէկը, ով կարողութիւն և ընդունակութիւն կունենայ։

Քաղաքակիրթ աշխարհը Աբդիւլ Համիդի համար „իլեան“ (գլխագին) է նշանակել, այնպէս, ինչպէս անում է թիւրք իշխանութիւնը այս կամ այն աւազակի համար, որի գլուխ կտրողը դրամական վարձատրութիւն է ստանում։

Սուլթանի սպանողներին Եւրոպայում ոչ ոք ինարկէ դրամով չի վարձատրիլ, բայց ամբողջ հասարակութիւնը ծափահարութեամբ կ՚ողջունի նրանց յանդուգն ու վեհ ժեստը։

Այն օրը, երբ սուլթանը կը սատկի,—ոչ իր անկողնու մէջ, այլ վրէժխնդիր բազուկի հարւածների տակ,—այդ օրը լուսաւորեալ մարդկութիւնը ազատ շունչ կը քաշի, իր վրայից սրբւած տեսնելով մի մեծագոյն նախատինք, որովհետև Աբդիւլ Համիդի գոյութեան իւրաքանչիւր օրը մի մի ամօթաբեր րոպէներ են Եւրոպայի պատմութեան համար, որովհետև նա իր գոյութեամբ ամեն օր յիշեցնում է Եւրոպայի կրկնակի անկումը՝—այն սոսկալի եղեռնը, որ կատարուել է մարդկային խղճի դէմ նորագոյն ժամանակներում և այն խայտառակ անպատժութիւնը, որ վայելում է մեր լուսաւոր դարում մեծ ոճրագործը։ Ասում ենք, կրկնակի անկում, որովհետև եթէ հայկական կոտորածները և մակեդոնական սարսափները հրէշային եղեռներ են, ոչ նուազ սոսկալի է եւրոպական պետութիւնների լռելեայն համակերպութիւնը։

Այս բոլորից յետոյ Եւրոպան զգում է, որ միմիայն սուլթանի արկածահար խորտակումը կարող է սրբել քաղաքակրթութեան վրայ ընկած արատը։ Ահա թէ ինչու Եւրոպան չէ դատապարտում այդ տեսակ մի վախճան,—նա, ընդհակառակը, ակնկալում է, նա յանձնարարում է այդ մահը...

Մեզ՝ Համիդի զոհերիս համար սուլթանի սպանութեան փորձը ունի և անմիջական նշանակութիւն։ Ճիշտ է, այդ սպանութիւնից մենք չենք սպասում մեր երկրի յաղթանակը. եթէ ոճրագործ Համիդից յետոյ գայ մի սրբեցող Րէշատ, տաճկահպատակ մեր եղբայրակիցների դրութիւնը ոչ մի բանով չի լաւանալ։ Ներկայ ռէժիմը կը մնայ իրեն յատուկ դաժանութեամբ, նենգամտութեամբ և աւերածութեամբ։ Ելդըզում բոյն դրած օրինակները նոյնպէս զօրաւոր կը լինին, ինչպէս հիմա են, կամ նրանց տեղը կը բռնի շատ նման մի ուրիշ վոհմակ։ Համիդի ընկնելով, համիդիականութիւնը չի ընկնելու։ Համիդը չէ, որ ստեղծել է այդ դրութիւնը,—նա միայն սրող սիստեմի է վերածել, նա գործադրում է սիստեմը արիւնռուշտ կրքով, հրէշային ցինիզմով, որ սարսափ և նողկանք է առաջ բերում ամբողջ մարդկութեան մէջ։ Եւ եթէ համաշխարհային խիղճը պահանջում է, յանուն քաղաքակրթութեան, որ Աբդիւլ Համիդը ստանայ իր արժանի վարձատրութիւնը, նրա իշխանութեան ենթակայ հեծող ժողովուրդների արժանապատւութիւնը պահանջում է, որ այդ վրիժառու հարւածը իրենց ձեռքով իջեցրած լինի։

Հարւածը իջեցնելու փորձը եղաւ. նա անաջող անցաւ։ Եւ մենք ցաւում ենք, որ մեր այս յօդւածի գլխին Աբդիւլ Համիդի մահազդը դնելու բախտ չունեցանք։ Եւ ցաւելով հանդերձ, մենք մեր հիացումն ենք յայտնում այն հպարտ ու ողբերգական ժեստի համար, որով պատրաստուել էին ջախջախել, յանձին Համիդի, անվրէժ ընկած անհամար զոհերի դահճին։ Եթէ վրիժառութիւնը, հին փիլիսոփաների ասելով, աստուածների հաճոյքն էր,—ներկայումս նա ժողովուրդների սրբազան պարտականութիւնն է, այն բոլոր ժողովուրդների, որոնց գլխին մոլեգնում են դաժանասիրտ կամ նենգամիտ տէրերը։

«Վէչերնա Պօչտա»

„ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

Շուշի, 10 հոկտեմբերի

Զանգեզուրը արիւնահեղ ընդհարումների թատր է։ Թիւրքերը յարձակուել են Ղարաղշլաղ հայ գիւղի վրայ. հայերը յետ են մղել յարձակումը, կոտորելով 50-ի չափ թիւրք, և այրելով թրքական Ղշլաղ գիւղը։ Խրախուսւած Մինքենդլի աջողութիւնից՝ թիւրքերը յարձակւեցին Խոզնավար հայ գիւղի վրայ, դարձեալ յետ մղւեցին։ Հայերը իրենց կողմից սկսեցին յարձակումները, քարուքանդ արին 7 թրքական գիւղ, որոնց թւում՝ Մալիբայլու և Բայանդուր։ Այդ գիւղերում գտնւեցան բազմաթիւ իրէղէններ, որոնք պատկանում են Մինքենդի զոհերին։

Շուշի, 17 հոկտեմբերի

Խռովութիւնները շարունակւում են Խաչէն գաւառում։ Թիւրքերը մի քանի անգամ յարձակւեցին Կէշան և Ուլուբաբ գիւղերի վրայ և թալանեցին։ Հայերը սպասեցին, որ ոճրագործները պատժւեն, սակայն իզուր. այն ժամանակ նրանք իրենց կողմից յարձակւեցին և աւերեցին չորս թրքական գիւղ ու հրդեհեցին թիւրք հրոսակների առաջնորդ՝ Ջավադ Ջվանշիրի ագարակները։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ կ. կոմիտէն

Համար 10-ի շարունակութիւն:

Վ.ՐԷԺ կոմիտէից՝ յունուարից մարտ 1905.—Ախպէր խմբից՝ մի ընկերական ճաշկերոյթից 70 դռան 30 կ. մի ներկայացումից 204, 5. անդամավճար 331, Կայծակ խ. անդամավճար 158, Աւետիս 460, մի հրատարակութիւն 57. 50, մի ներկայացում 128, Արիս խ. անդամավճ. 50, Ծիածան խ. 1904 թւի մնացորդ անդամավճ. 184, Աւետիս մնացորդ 36, անդամավճ. 192, Անդրանիկ խ. անդամավճ. 29. 50, Բուքէտից 16, Յոյս խ. 1904 թւի մնացորդ անդամավճար, 157, մի երեկոյթից 885. 25, խմբի անդամներից նւէր 400, անդամավճ. 113, Վահան խ. անդամավճ. 120, Աւետիսեան խ. անդամավճ, 20, Մուրատ խ. անդմվճ. 158, Գէորգ-Չաւուշ խ. 52. 50, Բաբկէն-Սիւնի խ. անդամավճար 42, Մասիցայ՝ 273. 60: Գումար 4137 դ. 70 կոպ.: Աւետիսեան խմբի միջոցաւ նւէր Ուղեւորից՝ մի ատրճանակ եւ մի դաշոյն:

ԱՒԱՐԱՅՐԻ կոմիտէից: Հրայր խ. 299, Խանի խմբ 36, № 29 հանգ. թերթով Մ. Օ. Կ, 35, Ռ. Օ, Յ. 20, Օ, Տ. Ս. 20, Օ. Ձ. 8, Յ. Ա. 8, Ն. Թ. 6, Ս. Վ. 4, Տ. Դ. 10, Պ. Ո. 8, Դ. Մ. 4. Թարօ 6, Ալլահ 2, Կարապետեան 5; Պ. Պետ. 4, Մէրաք 8, Ձ. Դալ. 5, Թ. Շ. 4, միրզա Կ. 4, Ս. Գ. 1. 50, Ս. Ե. 2, Ա. Թ. 4. Խ. Օ. 2, Թ. Խ, 2. Խ Ձ. 4, Ն. Ա. 2, Ա. Ղ. 2, Կ. Ե. 4, Ա. Ջ. 3, Բ. Հ. 4, Ե. Բ. 4, Ալ. 4, Կ. Ջ. 2, Կ. խան 2, Մ. Խ. 8, Բ. Խ. 4, Մ. Խ. 2, Ս. Խ. 3, Մ. Կ. 1, Դանիխ 4, Ե. Յ. 2, Ղ. Յ. 2, Ս. Յ. 2, Ս. Յով. 4, Բ. Թ. 1. 50, Մ. Ե. 3, Խ. Գ. 2, Մ. Խ. 2, Ռ. Յ. 2, Մ. Ս. 4, Գ. Ս. 2, Մաքսաւոր 80, Մար. մ. 10, Պետ. 10, Ոսն. 10, Աբ. Դ. 5, Ոսն. 10, Ա. Դաւիթ 20, Գաբրիէլ 10, Ար. Ար. 16, Սուրէն, 10, Վահան 10, Վասպուրականցի 20, Խուտօման 15, Մ. Մ. Օ. 30, Դմ. Օ. 30, Գ. Մ. 20, Գալիլիացին 20, Կ. 20, Արիսի որդին 10, Ստեփան 4, Տ. Վ. 4, Սարհատ 15, Կ. Բաղդ. 2, Յով. Ս. 2, Նահ. 15, Գրիգոր 6, Խաչատուր 4, Մէկ Խուտա 20, Ստ. Սար. 5, Իս. Ստեփ 10, Աբգար 1, Լեւոն 2, Ազիզ Ստ. 2, Յովհաննէս 3, Համբարձում 5, Հ. Աղախ. 10, Մարոս 4, Ասլան 4, Յովհաննէս 2, Կարապետ 6, Բաբա 6, Հայրապետ 15, Լալա 10, Դադաշ 12, Կայծունի 5, Այէքսան 16, Ստեփ. 2, Յ. Դ. 2, Կ. եւ Ն. 2, Աղաջան 2. Կար. Եր. 12, Մովսէս 2, Բաբայի եղբայր 4, Ստեփ. 3, Ջաքարեանց 6, Դիզայից 60: Գումար 1228 դռան:

ԳԱՂԹԱՇԷՆԻՑ. Ջինկի ժայռ խմբից 126 դռ. Պատանի խ. 14, Անուշ խ. 90, Պատանի խ. 30: Գումար 260 դռան:

ՂՈՋԱՆԻՑ—Հանգանակած № 47 հանգ. թերթով. Յ. Ստ. 30 դռան, Ջաքուչ 20, Ոսն 20, Ալ. 20, Սոսկ 20, Ս. Աւագ, 10, Մ. Ղարիբ 30, Գոխտնեցի 20, Հայկ Ղահրամանեան 10, Ազգասէր 10, Մ. Ո. 20, Անցորդ 20, Մեղրեցի 10, Ղարաբաղցի 10, Բուրն 40, Նւէր հաւաքւած 25 անձնաւորութիւններից 507 դ. 50 կ. Սօցիալի 10, Անդրանիկ խմբից՝ նոյեմբեր 1904 թ. ամսավճար 155, դեկտ. ամսվճ. 35, մասնաւոր նւէրներ 85, յունւար 1905 Աւետիսից 250, փետր. ամսվճ. 60, երեկոյթից արդիւնք 216, մարտ. ամսվճ. 50, ապրիլ ամսվճ. 40. 50: Գումար 1700 դռան:

ՇԱՀՐՈՒԹԻՑ հանգանակած № 46-ով՝ Խաչո նւէր 250 դռան, Մովսէս Գրիգորեան 150, Զոհրաբ եւ Պետրոս Գրիգորեան 50, Կոստի Բալուչ 50, Մար-զար 350, Քաքանեանց 100, Բ. Սիւնեցի վաչական 100, Սմբատ ազարակցի 30, Արամիս 100, Պարոն Շուշեցի 80, Աղջիկ պարոն Շուշեցի 20, Մկրտիչ Սափարեանց 70, Մանուկ Վէնէտիկ 100, Կայծակ 30, Անդրիկ 20, Ա. Նանաչ 50, Շահրութի քօնղ 60, Վարպետ 50, Ֆ. Մալեանց 100, Ո. Արզաշիչ 15, Բամբակ Արշ-Կենօք 125: Գումար 1900 դռան:

ԳԻԼԱՆ կոմիտէից. յունուարից—մարտ 1905—Կայծակ խ. 210 դռ. Որոտան խ. 130, Ղարադաղ 162, Փունջ խ. 150, Փունջին Սեւ լեռներից նւէր 11, Մեղու խ. 207. անդամուհիներից նւէր 36, հարսանեաց առթիւ տիկ. Ս. Թաշնւէր 250, Դղորդ Հայաստանի խ. 231, Հրաձիգ խ. 140, Էնզելուց՝ Սէր խ. 106, Հրայր խ. 104, Աղբիւր 158: Գումար 1895 դռան:

ԲԱՆԱՐԱԳԵԱԶԻ Բէնդէր խմբից № 43 հանգ. թերթով, Մոծակ (2 ռուբլի) 12 դռան, Գիգիլ 16, Մուրացան 10, Կայծակ 1, Մոծակ (1 ր. 10 կ.) 5 դ. 60 կ., Թղթախաղից 3, Շաքարից 150, Կռունկ 30, Տիգրանոյոս 30, Սողոս 30, Աւել 2, Գուրգէն 5, Ոսն Մամաղանցի 5, Ձնդան 15, ճանապարհորդ 15, Ստաքան 20, Սերմ 50, Երջանիկ 15, Գուրգէն 25, Սպասող 50, Դաւրէժ 30, թղթախաղից 7 դ. 40 կ. Թռչուն 100, Ոսն 25, Թղթախաղ 2, Հինգ-Ծաղիկ 55, Մելիքզատէ 5, Մուրացան 27 դ. 30 կ., Կռունկ 300, Ն. Սիւնեցի 8 դ. 30 կ. Շաքարից 133, Թղթախաղից 2, Փունջ 20, Ռասամֆօլացի 20, Անձաղ 5, Թիքեղ 30, Ոսն 10, Թաքուլ 2 անգամ 9, Ն. Սիւնեցի 24, Ն. Սիւնեցի 10, Նորեկ Դ. Մ. 43, Արտեմ 3. Կռունկ 130, Դավրիժեցի 45, հինգ-Ծաղիկ 11, Շաքարից 129 դ. 25 կ., Ն. Սիւնեցի 9 Ստաքանից 32, վիճակախաղից 9, Վիճակախաղից 10, Գուրգէն 11 դ. 70 կ.: Գումար 1866 դ. 55 կ.:

ԲԱՆԱՐԱԳԵԱԶԻ Բէնդէր խմբից, Հակերից.—Նանաջան 50 դռան, Ոսն 112 դ. 10 կ. Ծիծեռնակ 73, Գողթնեցի 25, Հինգ-Ծաղիկ 20, Կռունկ 330 դ. 25 կ., Ոսկի ք. 100, Տիգրան 16, Անանունից 157, Սահակից 50, Գուրգէն 31, Ն. Սիւնեցի 5, Սայրենից 15, Գնունի երգչից 28, Գողթնեցի (2 ր.) 12 դ. 50 կ., Ն. Սիւնեցի 15 դ. 50 կ. Գուրգէն 6 դ. 45 կ., Դաւիթ դայի 15. Անանունից 156 դ. 30 կ. Հինգ-Ծաղիկ 45 դ. 5 կ., Գողթեցի 33, Ոսն 51 դռ. 55 կ., Մոծակից 11 դ. 50 կ., Դավրէժեցի 60, Կռունկ 165 դ. 30 կ., Գնունի 2, Արղեմ Մ. Ե. 5., Լալանբալասի 16, եւս 120, Գողթնեցի 23, Դավրէժեցի 41, Ն. Սիւնեցի 29 դ. 45 կ., Ոսն 52, Ծիծեռնակ 125, Հինգ-Ծաղիկ 17. 90, Կռունկ 209, Անանուն 217, Գուրգէն 7 դ. 50 կ. Ասլան Բալասի 15 դ. 50 կ., Մայխաս 12, Ն. Սիւնեցի 19 դ. 65 կ., Գուրգէն 2 դ. 50 կ., Հինգ-Ծաղիկ 20, Գողթնեցի 14, Ծիծեռնակ 40 դ. 35 կ., Անորոշ 31, Արտէմից եւ Տիգրանից 11, Կռունկ 203 դ. 5 կ., Թուման 31, Անանուն շաքր 118 դ. 40 կ., Ախքաս դուքանչի 1, Դաւութ դայի 6, Լոյս 10: Գումար 2984 դռան 30 կ.:

Բէնդէր խ. անդամավճար. Բէշիշ օղլի 27 դռ., 11 անդամից 99, Հերոսուհուց 27, 14 անդամից 108, Ծիծեռնակ 60 դ. 75 կ., 14 անդամից մնացորդ անդամավճ. 312, Հերոսուհուց 30, եւս 9, ներկայացումից 428, Վիճակախաղից 20: Գումար 1120 դռան 75 կ.

ԱՐԱԽԻ Արցան խ. անդամվճ եւ նւէր 430 դռան, Արձագանք խ. անդամվճ. 260, Աքցան 135, եւս խ-ի հանգանակութիւնից 1800 դ. Գումար 2625 դռան:

ԲԱՐՖՐՈՒՇ Անդամավճար եւ նւէրներ 250 դռան:

ՄԱՐԱՂԱ Արշ. եւ զ. խմբերի միջոցաւ տուգանք 200 դռան:

ԱՐԴԱՎԻԼԻ Շահումեան խ. 95 դ. նոյն 148 դ. 50 կ. Գ. 243 դ. 50 կ.

Ընդհանուր գումար 25107 դռ. 15 կ.

ՊԱԼՔԱՆԵԱՆ կեդր. կոմիտէն՝

ՊՐԱՅԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ՝ 1905 թ. յունւար, փետրւար եւ մարտ ամիսներում մէջ՝ հետեւեալ խմբ. Առիւծ 24, եւս 20, Կարմիր լեռ 48, եւս 13, Գուրգէն 30, եւս 12. 60, Ագիւլ 42, եւս 17, Նիհար 57, Անդրանիկ 31, եւս 15, Արարատ 12, Բանի մը ազգայիններէ 21, Անցած շրջանի խմբ. ապառիկ. 77, 60: Գումար 1420 ֆր. 20 ս.

ՍԼԻՎԷՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ՝ 1905 ի հաշիւ՝ հետեւեալ խմբերից Սքօպէլով Առիւծ 7. 50, Գարաբունարի Պետօ եւ Հրայր 96, Սերոբ 32, Բաղնա-Մահլէի Դրախտ 45, Ազատ 40, եւս 20, Ստրալճա կայարանի Արաքօ 20. 40, եւս 26. 20, եւս 36. 20, նոյն խմբ. նւէր Տիմիթրօ Եանաքիէն 10, նոյն կայարանի Սերոբ Աղբիւր 25, եւս 25, եւս 34, եւս 28: Գումար 425 լեւ 50 ս.

ՊՈՒՔՐԷՇԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ՝ հետեւեալ խմբերից՝ Սէրէմնեան 33, Ֆէդայի 16, Վազգէն 16, Տիկնանց Շամէ 33, Տիկնանց Արաքս 39, Նէվրուզ 33, Զէյթուն 30, Անդրանիկ 24, նոյն խմբի 1904 ի հաշւէն 21, Կայծակ 21: Գումար 266 ֆր.

ՎԱՌՆԱՅԻ ԿՈՄԻՏԷ՝ հետեւեալ խմբերից՝ Յառաջդիմական նոր տարւայ սարքած վիճակահանութենէն 66 լեւ, նոյն խ. ամսավճ. 29, Տարօն 1904 հաշիւ 94, Կուկունեան 1904 հաշիւ 36, Հայրիկ 1904 73, Սպարտա նոյնպէս 42. 50, Հրայր նոյնպէս 66. 80, Բողոք նոյնպէս 33, Ռշտունի նոյնպէս 54, Առիւծ 51, Զանազան նւէրներէ՝ 15:

Գումար 560 լեւ 70 ս.

ԹՈՒԼՉԱԻ ԽՈՒՄԲԵՐԷՆ՝ Անդրանիկ 21 ֆր. 20 ս. Սերոբ Աղբիւր 23, Հրայր 7, Մեռած ընկերոջ մը կտակէն զանձւած 20: Գում. 71, 20.

ՖԻԼԻՊԷԻ ԿՈՄԻՏԷՆ՝ Անցած շրջանի վերջը երգ.—թատր. խումբին ի նպաստ Կարմիր Խաչի տւած ներկայացումէն զուտ հասոյթ 261 լեւ 75 ս. Վահան Մանուէլեանի աշակերտներէն՝ 42. 20, Տարօն խ. 45, եւս 21, Վրէժի Բ. տասնեակէն 36, եւս 38, Վրէժի Ա. տասնեակէն 30, Վարդգէս խ. 19, եւս 21, Հեթում Գագիկ խ. 39, եւս 38, Հրայր խ. 42, Արիստակէս Զօրեանց խ. Ա. տասնեակէն 30, Արիստակէս Զօրեանց խ. Բ. տասնեակէն 20, Խնճոյքի մը առթիւ հանգանակւած 56, Տիկնանց Շամէ խ. 212. 50, եւս 100, Ապիլ Թաքուլ խ. 58, Վասպուրական խ. 80, Օրիորդներու Կարմիր Խաչ խ. 220, Սօսի Այծեամ ընկերուհիներէ 46. 75, Բաբկէն Սիւնի խ. 20, Դայանրգի Անձնուրաց խ. 21, Պիսակից նւէր 10, լսարանէ գոյացած 17:

Ընդհանուր գումար 2084, 90 լեւ եւ 1182, 80 ֆր.

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rèdaction du „DROSCHAK", Genève (Suisse)